

ԱՐՈՎԵՄՆԻ  
ԿՅԱՆՔԸ

89199.092.Արկ

9 - 39







Խ. ԱՐՈՎՅԱՆ

891.99.092 [Գրումայ]  
Հ-39  
№ 1 ԱՐՈՎՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ Հ 1

13 APR 2011

Խ.

ԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐՅԱԾ

## ԱՐՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

ՀԱՄԱՌՈՍ ՕԿՆԱՐԿ

Երորդ, վերանայված հրատարակություն

ՀԱՅԹԵՏՀՐԱՑ  
ԵՐԵՎԱՆ  
1940

12 APR 2013

68.919

Պատ-խմբագիր  
Հ. Գրիգորյան  
Տեխ.-խմբագիր  
Ա. Ալբուջյան  
Մըթագրիչ  
Մ. Թումանյան

Վ.Պ 2484 Հրատ. 5344

Պատվեր 681 Տեղայ. 4000

Հանձնված ե արտադրության 5 X 1940 թ.  
Ստորագրված ե տպագրութ. 28/X 1940 թ.

Հայովետնբառի տպարան, Երևան, Լենինի 65



2562  
41

**Р. ЗАРЬЯН**  
ЖИЭНЬ АБОВЯНА  
Армгиз, Ереван  
1940

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հայ նոր գրական ուրբայն հիմնադիր՝ և Արք յանի Երկերը ծովովդի սեփականությունը դարձելու Յղասակով, Հայպէտիքատր ձեռնարկել է 1940 և 1941 թ. պ. «Արքովյանի գրադարան» սերիայի հրատարակությանը, որն ընդգրկելու է հետևյալ տասը գիրքը. «Արքովյանի կյանքը», «Բայարիներ», «Բանաստեղծություններ», «Թուրքի աղջկեր», «Առակներ», «Ընթերցարան», «Հազարփեշեն», հատվածներ «Վեհրք»-ից, «Բրուեր» և «Անձնառակերտ հուշագրան»:

Ներկա գրքույկը, որով սկսվում է «Արովյանի  
գրադարան» սերիան, նպատակ ունի թրեթրող լայն  
շրջանին ծանոքացնել հայ մեծ լուսավորչի կյանքի  
եվ գործունեության հետ:

Գրողների ճակատագիրը տարբեր է ե-  
զել. եղել են գրողներ, որոնց մասին ժա-  
մանակակիցները խռովել են ողելորված,  
հափշտակված, բայց հենց որ անցել է մի  
սերունդ, հետզետե մոռացվել են: Բայց  
եղել են և այնպիսի գրողներ, որոնց չի  
հաջողվել կենդանության օրով տեսնել,  
վայելել իրենց վաստակի պառովը, փառքը:  
Մեծ մասամբ նրանց դեմ կուվել են, հետա-  
պնդել, հալածել, նույնիսկ թունավորել:  
Բայց հենց որ մեռել են, փառքն ինքն է  
հետեւել նրանց: Այդպիսի գրողներին մատ-  
ների վրա կարելի է հաշվել: Դրանք եղակի  
են, չառ քիչ: Այդ գրողներն են ստեղծել

զբականության պատմությունը։ Նրանց ու-  
նունով է բացվում զբականության պատ-  
մության նոր գլուխը։ Այդ զբողները միշտ  
սկիզբն են եղել ուրիշի շարունակության,  
այսինքն նրանք են ուղղություն ստեղծել,  
ոճ կերտել, ունեցել աշակերտներ, հետե-  
լողներ։ Ժամանակի լուսավոր զաղափար-  
ներն արտահայտելը՝ նրանց սրբազնն դու ծն  
է եղել։ Հումանիզմը՝ նրանց եռությու-  
նը։ Անմահություն—ահա այն պարզեր,  
որ տվել է նրանց ժամանակը։

Այդպիսիներից է և Խաչատրը Աբովյա-  
նը, հայ նոր զբականության անմահ նա-  
խադուխը։ Նա մի օվկիան է, որի մեջ  
թափվել է հաղար ու մի գետ։ Պատմակա-  
նորեն նրան վիճակից հարթելու այն  
դժվարին առապարը, որով երեսնական,  
քառասնական թ.թ. հայ հասարակական  
մտքի լավագույնն ու լուսավորն ուսին՝  
նա քայլեց դեպի մեր զբական-մտալորա-  
կան կյանքի հախուռն վերածնությունը։  
Աբովյանը լուսավորական շարժման առա-  
ջին ջահակիրներից է։ Ինչպես ամենուրեք,

այնպես էլ մեկ մոտ, լուսավորիչը մի  
կենդանի հանրակիարան է եղել. մանկա-  
վարժ, աղջակագործետ, լեզվաբան, ուսամտ-  
բան, թարգմանիչ, Փուկլորիստ, տուրիստ  
և վերջապես, գրող՝ բառիս խորագույն  
խմառապու։ Այդ առումով Աբովյանը հիշեց-  
նում է իսպալական վերածնության դուր-  
ծիչներին։

Պոռշյանն իրավացի էր. Աբովյանը ժա-  
մանակից չուտ էր ծնվել։ Եվ իրավ. հե-  
ռավոր տարիների մշուշից նա մեզ ներկա-  
յանում է որպես մի առասպելական անձ-  
նավորություն, որ իր քնքո՞ւ սրտի ամեն  
մի զարկը զոհ բերեց ժողովրդին, միայ-  
նակ հանդուզն պատերազմի ելավ խավարի  
և տղիտության, եկեղեցու ու կղերի դեմ։

Այստեղ, Աբովյանը միայնակ էր։

Այդ նրա ողբերգությունն էր։ Նա մի  
լուսու ճառագայթ էր «խավարի թագավոր-  
ության» մեջ։ Նա իր լուսով մի պահ  
բոցավառեց մոայլ, անփարաս խավարը,  
և սեփական բոցից էլ ողջակեղ եղավ։

Դառնանք դեպի պատմությունը, դեպի

այն ժամանակները, Երբ ապրել ու դործել  
է Արովյանը: Թերթենք նրա կյանքի տա-  
րեղությունն էջ առ էջ:

---

Երբ է ծնվել Խաչատրուր Արովյանը, ըստ  
տույլ հայոնի չէ: Ինքը, Արովյանն էլ չի  
խմացել իր ծննդյան ճիշտ թիվը: Հիշողու-  
թյամբ նա թողել է մի քանի տարբեր  
թվականներ: Հավանական թիվը պետք է  
համարել 1809-ը: Ծնվել է Քանաքեռում,  
հարուստ, նշանավոր և ամեն կողմից հարգ-  
ված հարկի, տակ: Արովյանի հեռավոր  
նախնիները եղել են իշխաններ: Նեղվելով  
լեռնցիների ասպատակություններից, Ա-  
րովյանի ազուրապը՝ Արովը թողնում է  
Լաղիստանը, գալիս է Հայաստան:  
Ահա այս Ապովից էլ սերում է Արով-  
յանների տոհմը:  
Ապովի մահից չափ տարիներ հետո էլ

Նրա անունը պատկառանքով էին հիշում  
Ժամանակակիցները. «Հարիր տարի կըլի,  
որ լուսահոդի Ապովը մեռել ա, էլի նև  
ողորմին հա կա, հա կա»: Աբովյանն ա-  
սում է, «որ իր մանկության օքերին թռւլք  
ու հայ նրա գերեզմանովն էին օրթում ու-  
սում: Ապովի հահապետական առաքինությունները՝ հյութափությունն ու առա-  
տաձեռնությունը հայտնի էին: Ապովն իր  
ձեռովը Երեվանից Թիֆլիս տանող ճանա-  
պարհի վրա մի մեծ այգի էր գցել, որ  
«անց կենողը զա, նրա բարությունը վա-  
յելի»: Այդու բռնոր պառուղները օտարնե-  
րինն ու ճանապարհորդներինն էր: Միշտ  
նրա դուսը բաց էր, որ ով որչափ ուզում  
է՝ ուտի, տանի: Հազարավոր մարդ էր  
մանում ու դուրս դալիս: Բացի այն՝ որ  
տանում էին, այլև քթոցների մեջ լցնում  
էին ու դնում ճանապարհի վրա, որպեսզի  
որևէ օտարական, որ զուցե բալորովին  
տեղեկություն չունի այցուց և զալիս անց-  
նում է, ուտի ու վկրցնի այստեղից, որքան  
կարող է: Ինչպես որ այդին, այնպես էլ

տունն էր: Շատ քիչ կպատահեր, որ այդ  
ճանապարհով մեկն անցներ ու չմտներ նրա  
տունը: Ապովի համբավը շատ հեռուներն  
էր տարածվել: Իսկ «ճամփի վրի մեծ ի-  
քու անունը—Հնդստան ա հասել»—ասում է  
Աբովյանը:

Աբովյանի ժամանակ նրանց տոհմն այլ-  
ևս նախնիների գիրքն ու կարողությունը  
չուներ: Բայց Հարությունը, որ գերդաս-  
տանի նահապետն էր, պակաս անվանի  
մարդ չէր: Նրա տունը Քանաքեռի պատ-  
վավոր հարկերից մեկն էր:

Նրան շատ լավ ճանաչում էին կաթողի-  
կոսը, Էջմիածնի միաբանները, Երևանի  
սարդարը, պարսիկ մելիքները, հայ վաճա-  
ռականները: Նա սիրելի հյուր էր ինչպես  
Էջմիածնում, այնպես էլ Երևանում, քա-  
ղաքի անվանի մարդկանց ու մեծամեծների  
տանը:

Նրա հետ մի առանձին սիրով է կապված  
Եղել Խաչատուրը: Զհշելով գրեթե ոչ  
մի տեղ հորը և մորը, Աբովյանն իր  
հորեղբորը, Հարությունին նվիրել է բա-

նաստեղծություններ, նրան դուրս է բերել  
իր զրվածքների մեջ։ Դա մի հաղթանգամ  
գյուղացի էր, անվախ սրտի տեր, զար-  
մանալի քաջ, խստաբարո, բայց բա-  
րի, ընտանիքը սիրող։ Աշխատանքից հե-  
տո, երեկոները, ձմբան գլխելներին՝  
տանը, օջախի շուրջը, ամառային օրերին՝  
դուրսը, աստղադարդ երկնքի աակ, իր  
շուրջը հավաքած ողջ գերլաստանը, Հա-  
րությունը խոսում էր, զրուցում աշ-  
խարհի բարու և չարի մասին։ Պարզածիտ  
նահապետական գյուղացին աշխատում էր  
իր երեխաներին մարդասիրական դադա-  
փարներ ներշնչել։ Նա համոզում էր հար-  
դել մեծերին, պահել ընտանիքի պատիվը,  
կանգնել պաշտպան թույլին, օգնության  
հասնել ընկածին։ Հորեղբոր զբուցներն  
ու խրատներն Աբովյանի վրա մեծ տպա-  
վորություն էին թողնում։

Պակաս ազգեցություն չեն ունեցել Ա-  
բովյանի վրա նահապետական գյուղի լի ու  
առատ կյանքը, հայկական Հյուրասիրու-  
թյունը, ժողովրդական տոները—բարեկեն-

դանն իր իմակություններով, զյուղական  
ջահելների խաղը, պարը, երգը, ջիրիգը։  
Աբովյանի մանկական հուշերի ոսկեշրջ-  
թայի մեջ առանձին տեղ ունի Քանաքեռի  
բնությունը։ Մանուկ հասակից բնության  
սիրահար էր նա։ Իր նամակների ու բա-  
նաստեղծությունների մեջ անդադար հի-  
շում է Քանաքեռը — տեղը բարձր, ջուրը  
քաղցր, ողը գեղեցիկ, չորս կողմը բաղերով  
լի։ Շատ հաճախ չարանձի ու աշխույժ մա-  
նուկը, թողած խաղը, ընկերներին, բարձ-  
րանում էր կտուրը, նստում ժամերով,  
սքանչամում բնությամբ։ Նա հմայված զի-  
տում էր անձրեսից հետո երկնքի անհուն  
կապույտի վրա երիզվաղ չքնաղ ծիածանը,  
Արարատյան գեղատեսիլ դաշտավայրը։  
Նրա վրա վեհությամբ բազմած փոքր ու  
մեծ Արարատները։ Զգայուն և շուտ տպա-  
վորվող մանկան հոգու վրա բնությունը  
դրեց իր անջնջելի կնիքը։ Բնության սերն  
ու պաշտամունքը չնչում են նրա յու-  
րաքանչյուր տողի մեջ։

Անկարելի է որ այդպիսի ուշիմ, խելոք

և զդայուն մանկան հոգու վրա հասարա-  
կական շրջապատն իր ազդեցությունը չու-  
նենարք։ Մի գերմանացի ճանապարհորդ իր  
ուղեգրությունների մեջ Աբովյանի բերա-  
նից պատմում է այն վայրագ բռնություն-  
ները, որ խանական Պարսկաստանի տիրա-  
պետության օրով գոյություն ունեին Քա-  
նաքեռում և ընդհանրապես Հայաստանում։  
Ամեն ամառ Հարկահավաքը դալիս էր  
դյուզ և մնում երեքից-չորս ամիս։ Այդ  
ամիսներին նա էր գյուղի իշխանավորը։  
Նրա ցանկությունը կարգադրություն էր,  
խոսքը՝ անվերապահ հրաման։ Բոլորը  
հլու-հնապահող ենթարկվում էին նրան։  
Նրա ծառան շրջում էր տնիդտուն և եթե  
դյուղացիները դանդաղում էին նրա պա-  
հանջը կատարելու, խուժում էր խրճիթ,  
ճիպոտահար անում բոլորին, տան ունեց-  
վածքը ջարդում, երբեմն էլ այրում։ Մ.  
Թաղիադյանն էլ է ամել այդ բանություն-  
ների նկարագիրը։ Երբ գյուղերում բերք  
չէր լինում, — ասում է նա, — Երեսնի բը-  
դեշիլը՝ Հյուսեյին խանը, վնասը վերա-

զրում էր ժողովրդին։ Նա գործ էր զնում  
նրանց վրա բոնություն և անպատմելի  
խժգծություն։ Խլում, հափչտակում էր  
ինչ որ տներում գտնում էր—կահ-կարասի,  
և երբ այդ էլ չէր լինում, խլում էր  
նրանց տունն ու տեղը, որդիներին։ «Աղ-  
ջիկն ասես՝ քաջում էին, տղեն ասես՝  
տանում, շատ անդամ թուրքացնում, հա-  
վատից հանում, շատ անդամ էլ գլուխը  
կտրում, էրում, նահատակում»,— պատ-  
մում է Աբովյանը։

Ահա այս բոլորի վկան է եղել Աբով-  
յանը։ Կարո՞ղ էր այս բոլորը չխոռվել  
նրա մանկական հոգին։ Իհարկե, ո՛չ։ Այդ  
բոլոր կեղեքումները ծանր, ճնշող տպա-  
վորություն են թողել նրա վրա։ Այդ բո-  
լորն Աբովյանը պատկերագրել է «Վերք  
Հայաստանի» վեպի մեջ։ Պարզ է, որ  
տասնամյա մանուկն այն ժամանակ շատ  
լուրջ մտքերի հանգել չէր կարող։ Բայց  
այդ չի նշանակում, որ զգայուն երեխան  
կարող էր անտարբեր մնալ դեպի իր շըր-  
ջապատը։ Նա մանկուց թշնամությամբ էր

լցված դեպի հարկահավաքները, մարդեկ՝  
սրոնք տեր էին կանգնում ուրիշի վաս-  
տակին: Նրա մշուշապատ մտածումները  
կարող էին դեռ այն ժամանակ վճիռանալ:  
Զէ՞ որ դյուզացիները հայլաքվում էին, ա-  
սում, խոսում, զժոհում անիբարվ կարգե-  
րից, մարդավայել կյանք երազում: Աչքա-  
րաց մանուկը, ահշուշտ լսել է դյուզացի-  
ների խոսքն ու զրույցը:



Հայրը մի առանձին մտահովովթյուն ու-  
ներ որպու կրթության և ապագայի վրա:  
Հենց որ Աբովյանը բոլորեց իր տասը տա-  
րին, Հայրը նրան ապավ էջմիածին:

Աբովյանն էջմիածնում մնաց մոտ հինգ  
տարի: Թե ինչ կյանք է ունեցել նա այդ  
տարիներին՝ շատ քիչ է հայտնի:

Աբովյանը դյուզում, բնության ծոցում  
ծնված ու մեծացած մանուկ էր, որ ընկալ  
էջմիածին: Նա իր հետ տարավ դեղջկական  
հոգու պարզություն և մաքրություն: Խա-  
ղը, խնդությունը, ահհոգ զվարճանքը,  
մեծերի դուրդուլանքը նրա սովորական

առօրյան էր դյուզում: Նոր ըրջապատը,  
էջմիածնի մթին խցերի վանական կյանքը:  
Դյուզականի հակապատկերն էր: Գուրզու-  
րանքի փոխարեն՝ դաժանություն, խաղի  
տեղ՝ ծեծ ու պատիժ, ազատության փո-  
խարեն՝ ստրկական հնագանդություն:  
Ինչպես մյուս մոնթերը, այնպես էլ Աբով-  
յանը, կանուխ առավոտից, հավախոսից  
անմիջապես հետո, պետք է արթուն լի-  
ներ: Ով գժվարանար ժամանակին վեր կե-  
նալ, բարակ ճիպուախ հարվածները կիջ-  
նեին նրա ոտներին: Առավոտյան ժամեր-  
գությունը տեռում էր անտանելի երկար,  
երեք-չորս ժամ: Մատաղահաս երեխաները  
ծունկի եկած մրմնջում էին աստվածալախ  
ազլոթքներ: Խոկ հետո էլ մթին ու անհրա-  
պույր խցերից մեկում, խմբված որևէ ծե-  
րունի վարդապետի շուրջ, մանուկները սո-  
վորում էին սաղմոս և շարական:

Աբովյանը չգիմացավ վանքի դաժանու-  
թյուններին: Մի քանի անգամ փախուստի  
փորձեր արեց: Բայց անհաջող: Փախչող-  
ների հետ շատ խիստ էին վարվում: Փախ-

չողնելին պատժում էին ամենադաժան ձևով, այսինքն՝ կախում էին մի բարձր տեղից և անողորմ հարվածներ թափում նրա ոտքերի եղունդներին, մինչև անհկարագրելի ցավերն ուշաթափ կանեխն «մեղավոր» երեխային :

Գերմանացի բանաստեղծ Բողենշտեռը, որ մոտիկից ծանրվթ էր Արովյանին, իր ուղեկրությունների մեջ հիշում է, որ Արովյանն էջմիածնի մասին ասել է իրեն թե՝ կարծեք իր գլխին սառը ջուր են մաղում, երբ ինքը ոտք է դնում հին պարխապներից ներս, այնքան անտանելի են այն տպավորությունները, որ ինքն ստացել է իր պատանեկության հասակում և որոնք երբեք այլևս չեն չքանում իր հիշողությունից :

Ուրեմն, որքա՞ն ծանր է եղել պատանու համար այդ հինգ տարվա կյանքը: Գրեթե երկու տասնամյակ հետո էլ, վանք ոտք դնելիս, մոայլ հիշողությունները ծանր մղճավանջի նման իջնում էին նրա վրա: Բողենշտեռի ասելով Արովյանը մեծա-

ցել է լացի, ազոթքի և սլահքի մեջ, վայրենի, ամեն աղնիվ բանի համար բթացած, անբնական հեշտությանց մեջ աղականված մի շրջապատում, ավելի օգուտ չունենալով, քան այն, որ նա մի վեոքուրաբար սովորեց էջմիածնում:

Վանքում Արովյանի մխակ մխիթարությունն Անտոն եպիսկոպոսն էր: Արովյանի խնամքը նրան էր հանձնված: Արովյանն այնքան էր սիրում իր ինամակալին, որ երեմն էլ նրա ազգանունով էր ստորագրում— եւաչատուր Անտոնյան: Արովյանի ծեռագրերի մեջ պահպանվել է Անտոն Եպիսկոպոսին նվիրված մի չափածողություն (գովեստ<sup>\*</sup>): Պատանի բանաստեղծն իր թոթով լեզվով չնորհակալ է լինում ուսուցչին, որ աշակերտին ներշնչել է սեր դեպի դիբքը: Նրա ձեռքի տակ սովորելով դրել-կարդալ՝ Արովյանը տառհնդդամյահասակում ընթերցում է հայրենասիրական

\*) Անտոնի մահից հետո, ի նշան երախտագիտության, Արովյանը գերեզմանաքար է զցել տալիս նրա շիրիմին

կրքեր։ Նա ծանոթանում է Ղուկաս Վահանեցու, Սիմեոն կաթողիկոսի, Մխիթար Աբբայի կյանքին։ Կարդացած գրքերը վառում են պատահու մեջ հայրենիքի սերը և կոչում նրան ծառայելու ձնշված ժողովը՝ դին, երկրին։ «Փափառէի և ես իմ ովանն կարողութեամբ սիրությու», — գրում է Աբովյանն այդ գրքերը կարդալուց հետո։ Այդ գրքերն օգնեցին նրան ճանաչելու իր երկրի անցյալը, խորամուխ լինելու հայոց պատմության մեջ։ Նա իմացավ, որ հայ ժողովուրդն իր սկիզբն առնելով հինավուրց ժամանակներից, ոտք է դցել աշխարհի հզոր սեռությունների հետ։ Կարո՞ղ էր նա չնկատել, որ նույն այդ ժողովուրդն այժմ տառապաղին հեծծում է օտար լծի տակ։ Իհարկե, ոչ։ Գյուղում տեսածն ու լսածը՝ կարդացած գրքերի ազդեցության տակ՝ այժմ կարող էին չառ որոշ խորհրդածությունների առարկա դառնալ։ Անկարելի է, որ պատասի հայրենացերն արդեն չմտմար այն ուղիների մասին, որ հայ ժողովրդին կարող

էին ազատություն բերել։ Որո՞նք էին այդ ուղիները, Աբովյանը չդիտեր։ Ո՞չ վանական միջավայրը, ո՞չ էլ կարդացած զըրքերն ունակ չէին ցույց տալու նրա որոնածը։ Եվ հայրենասիրությամբ տողորված տասնհինգամյա պատահու վառվուն միտքըն ու հոգին հայրենի երկիրն ազատ ու երջանիկ տեսնելու անհուն փափառով՝ գեռայն ժամանակ իրենց առաջին ճախրանքը կատարեցին դեպի երազանքների երանելի աշխարհ։



Հինգ տարի էշմիածնում մնալուց հետո, Աբովյանն անցնում է Հաղպատ, այնտեղից էլ՝ Թիֆլիս։ Նա գնում էր ուսման մեջ կատարելագործվելու։ Թիֆլիսն իր ուրուքն կյանքով մի նոր աշխարհ էր Աբովյանի համար։ Գավառացի պատանին ընկել էր քիչ թե շատ մեծ, շարժուն քաղաք։ Կյանքը Թիֆլիսում մի առանձին ու յուրատեսակ ժպիտ ուներ։ Այդ չէր կարող վրիպել Աբովյանի աչքից։ Զե վոր քիչ առաջ էր միայն նոր ազատվել վանքի մոռայլ խցե-

ըից : Սրտաբաց , զվարիթ քաղաքը , վահքի  
մուայլ , միալար կյանքի հակապատկերն  
էր : Հենց որ իրիկնազահը վրա էր հաս-  
նում , փողոցները լցվում էին երդի և խըն-  
դության ձայնելով : Զուռնա , նաղարա ,  
գհու , մի խոսքով՝ պարից , երդից , ծափ-  
ու ծիծաղից թնդում էր քաղաքը : Մի ա-  
ռանձին սքանչելիք էր , երբ լուսնակ զի-  
շերով քաղաքի փողոցներում սկսում էր  
ծորել Սայաթ Նովայի երգերի թափիծը :  
Երդիչներն ու նվազողներն անցնում էին  
փողոցից-փողոց , թաղից-թաղ : Ժողովուր-  
դը՝ հավաքված դարպասների մոտ , պա-  
տըզամբների ու կտուքների վրա՝ ուրա-  
խանում էր : Ճիշտ է նկատել բանաստեղ-  
ծը , թե թիֆլիս առաջին անդամ ոտք զը-  
նողն այն ապավորությունն էր ստանում ,  
որ ինքն ընկել է մի մեծ և ուրախ հար-  
սանքատուն , ուր հրալիքված էին Կով-  
կասի բոլոր աղդերն ու ցեղերը՝ քիֆ անե-  
լու :

Թիֆլիսը քիչ թե շատ քուրջ ուսումնա-  
կան հաստատություններ չուներ այն ժա-

ժանակ : Մի պատմաբանի առելով՝ ամբողջ  
քաղաքում որպես հայութեա հոչչակված էր  
ժամկոչ Եղիազար Գալստյանը : Նա մի  
կուռքանում , գետնի վրա պարապում էր  
երեխաների հետ , նրանց պահելով Փալախ-  
կայի մշտական ահ ու սարսափի տակ :  
Ահա այդ ժամանակներում Շուշուց թիփ-  
լիս է զալիս Պողոս վարդապետ Ղարաբաղ-  
ցին : Նա նշանավոր հայկարանի հարբաջ  
էր վայելում : Վերջինս եռանդուն զործու-  
նեության ըջնանում ժամկոչ Եղիազարն  
ստվերի մեջ է մնում : Արովյանը , Ստ.  
Նազարյանը և մի խումբ այլ պատանիներ  
Պողոս վարդապետի ձեռքի տակ մի տա-  
րու չափ ուսում են ստանում : Նա իր ա-  
շակերտների հետ պարապում էր Տափիթա-  
ղի վանքում — իր խցում : Այսուղ սև փա-  
լախկայի թաղավորությունն էր :

Հետաքրքրասեր ու վառվուն պատանի-  
ները «վարժապետական զավազանի» ահի  
տակ , օր ու զիշեր զլուխ էին ջարդում  
Զամչյանի քերականության , Աղոնց Ստե-  
փանոսի ճարտասանության և թեսավրուի

վրա: «Պիտու է ասել, որ այդ վարժապետը,  
—ղըում է նազարյանը Պողոս վարդա-  
պետի մասին, — ավելի ծեծ, քան թե ու-  
սում է տվել յուր աշակերտներին»:

1824-ին, Ներսես արքեպիսկոպոսի ջան-  
քերով, Թիֆլիսում բացվեց մի հոգևոր  
դպրոց: Դպրոցը կոչվեց Հիմնադրի՝ Ներ-  
սեսի անունով: Նոր բացված դպրոցի տե-  
սուչ կարգվեց Մոսկվայից Հրավիրված  
բանաստեղծ Հարություն Ավամդարյանը:  
Ներսիսյան դպրոցի բացումը մի կատար-  
յալ հեղաշրջում էր հայ երեխաների կըր-  
թության դորձում: Ասում են, որ դասա-  
ռվությունը եղել է վայրիվերո, բացի Ա-  
շամդարյանից մի ուրիշ կարգին ուսուցիչ  
չի եղել: Այդ բոլորով հանդերձ, դա հայ  
իրականության մեջ առաջին, բառի  
հշդրիտ մտքով՝ աշխարհիկ դպրոցն էր:  
Բացի ոռուերեն, Փրանսերեն և պարսկե-  
րեն լեզուներից, հայ պատանին Ներսիս-  
յան դպրոցում ծանոթանում էր ընդհանուր  
և հայոց պատմությանը, քրիստոնեական  
վարդապետությանը, անցնում թվարանու-

թյուն, աշխարհապրություն, նկարչու-  
թյուն, վարժվում ճարտասանության և  
տրամաբանության մեջ: Պողոս վարդապե-  
տի վարժատառնը Ներսիսյանի, մի տեսակ,  
նախապատրաստականն էր: Երբ բացվեց  
Ներսիսյանը, Պողոս վարդապետն իր աշա-  
կերտներով տեղափոխվեց նոր կըթարանը:  
Տեղափոխվեց նաև Աբովյանը:

Աբովյանի ծանոթությունն Ալամդար-  
յանի հետ վճռական նշանակություն ունե-  
ցավ:

Աբովյանի էջմիածնական մտորումների  
մշուչը Թիֆլիսում սկսեց ցըվել: էջմիած-  
նում պատանու մեջ արթնացավ սեր դեպի  
պիրքն ու ընթերքանությունը: Կարդացած  
գրքերը նրա մեջ վառեցին հայրենասիրու-  
թյան բարձր զգացումը: Այդ բոլորն իրենց  
դաղակարական հումք դտան միայն Թիֆ-  
լիսում: Այդ հարցում շատ մեծ էր Ալամ-  
դարյանի դերը: Մեծ, կարելի է ասել՝  
անջնջելի, աղղեցություն է թողել նա իր  
աշակերտների մտքի և հոգու վրա: Տա-  
րիներ հետո Աբովյանն Ալամդարյանի ըս-

Աղանության լուրջն առնելով, իր հիշատառ  
կարանի մեջ դրեց, թէ նրա մահով անժիշ  
հայ պատանիներ ու երիտասարդներ կորց-  
րին իրենց ապագան :

Ալամդարյանը սուսական օրիենտացիայի  
մարդ էր: Ռուսական պետականության  
մեջ էր նա տեսնում Հայաստանի փրկու-  
թյունը: Հայաստանի ապագա բախտը,  
կուլտուրական վերածնությունը նա կա-  
պում էր Երևանը Ռուսաստանի կողմից  
նվաճելու հետ: Կովկասի մեծ մասն արդեն  
նվաճված էր, իսկ Հայաստանը շարունա-  
կում էր մնալ Պարսկաստանի ձեռին: Այդ  
հարցերի մասին նա, անչուցաւ խոսում,  
դրուցում էր իր աշակերտների հետ: Շատ  
բան այժմ հայտնի չէ այն կապի մասին,  
որ այդ տարիներին ունեցել են աշակերտը  
և ուսուցիչը—Արովյանն ու Ալամդարյանը:  
Լինելով ամենահասակավորը և լրջախոհն  
աշակերտների մեջ՝ անկարելի է, որ Արով-  
յանը դասերից դուրս, դպրոցական պաշ-  
տոնական ժամերից հետո զրույցներ ունե-  
ցած չենի Ալամդարյանի հետ: Ուսուցչի

զրույցներն առատ սնունդ տալով Արովյա-  
նի ծով երևակայությանը՝ պետք է որ զեռ  
այն ժամանակներից՝ պատահուն ստիպեին  
Արջորեն խորհել իր երկրի բախտի վրա:  
Զէ՞ որ ինքը մանկուց վկա էր եղել,  
տեսել էր հայրենիքի տառապանքը: Որդե-  
ղրվելով իր ուսուցչի քաղաքական ծրա-  
պրերին՝ Արովյանը զտած էր համարում  
իր որոնածը: Նա էլ, Ալամդարյանի նման,  
Հայաստանի աղատավրության միակ խա-  
րիսխը սուսական պետականությունն է  
համարում:

\*\*\*

Արովյանը Ներսիսյան՝ դպրոցի առաջին  
ըրջանավարտներից եղավ: Ներսիսյան դպր-  
ոցն Արովյանի մեջ վառել էր մի անսահ-  
ման սեր դեպի դիտությունը, բորբոքել նրա  
եռանդն ու ձգտումը դեպի լուսավորությու-  
նը: Ավարտական վկայական ստանալով՝  
Արովյանն անցավ Հաղպատ՝ Եփրեմ կաթո-  
ղիկոսից Վենետիկի ուսաման դնալու թույլ-  
ալիքություն ստանալու համար: Գնալ վե-

նետիկ, թաղվել զբքերի մեջ, տիվ ու գերչը կըլել ձեսադրերի վրա, —այս էր նրա երազը: Բայց այդ միայն երազանք էր: Անակնկալ պատերազմը պարսիկների և ռուսների միջև խանդարեց նրան:

Արովյանը վկա եղավ պատերազմական աղետին: Հայկական գյուղերը մատնվում էին հրի ու սրի: Ժողովուրդն սկսում է դադթել, հաստատվել ոսւսի հողի վրա: Հայ դյուլացին ողբաճայն լացով հրաժեշտ է տալիս իր հողին, ջրին: Ժողովուրդը սար ու ձոր է լցվում, իրար վրա թափվում: «Լացի, սքի ձենը երկինքն էր հասել, լսողի, տեսնողի սիրաը էրում, փոթոթում», —պատմում է Արովյանը «Վերքի» մեջ:

Եխնելով պատերազմի մեջ, միշտ վերի ընկնելու վտանգի տակ, տեսնելով հայ գյուլացու անպատմելի զրկանքները, Արովյանը մի անգամ ընդմիշտ համոզվեց Արամդարյանի ներշնչած քաղաքական ձրդումների ճշմարտության մեջ: Նա թեև պատանի, բայց արդեն ռուսական, օրինա-

արագիայի համոզված ներկայացուցիչներից էր:

Պատերազմը տակալին չալարտված՝ Արովյանը մեկնում է էջմիածին: Երեանում նա գրում է մի ոտանալոր, որով վորձում է տալ իր հայրենիքի ազատագրության ծրագիրը: Այդ բանաստեղծությամբ նա հանդես է գալիս իրեւ կաղմակերպված քաղաքացի: Հետաքրքրության է մի հանդամանք: Արովյանը դեռ Թիֆլիս չմեկնած, 1824-ին, դարձյալ Երևանում, գրեց իր առաջին ոտանավորներից մեկը, որտեղ հայրենիքի տիրապին վիճակից դառնացած՝ ողեկոչում է հայրենի անցյալի անցած-ղնացած փառքը: Փրկության և հույսի ոչ մի չող չտեսնելով ավերակ երկրի համար, նա գանում է դեպի հայրենի գետերը և խնդրում, որ իր արցունքն էլ խամռեն իրենց հոսանքին: Այս բանաստեղծությունը գրելուց հետո անցել էր մի քանի տարի: Դեմքեր ու դեպքեր էին փոխվել Արովյանի կյանքում: Պատանի հեղինակը վերադար-

ձեւ էր հայրենիք շատ որոշ քաղաքական ձգտումներով ու համոզումներով։ Նոր դրվածքի մեջ՝ բանաստեղծն այն միտքն է հայտնում, որ հայ ժողովուրդն իր գալիք կյանքի բախտը, հանգիստն ու երջանկությունը կրտսնի միայն ոռւսական պետականության հովանու տակ։ Այդ ցուցը է տալիս, որ Աբովյանն այդ տարիներին միանդամայն լրջախոհ հայացք ուներ դեպի հասարակական քաղաքական ելանքը։ Այդ բանաստեղծությունը եղավ Աբովյանի քաղաքական հասունության մկայադիրը։

\*\*\*

Աբովյանն էջմիածին հասավ այն պահին, երբ ողջ միաբանությունը մի անհանդիստ տակնապի մեջ էր։ Քաղաքական դեպքերը շատ արագ չաջորդում էին իրար կաթողիկոսը չկար : Բոլորը սպասումների մեջ էին։ Ներսես Աշտարակեցին, որ այդ ժամանակ վրաստանի թեմի առաջնորդն էր և Ռուսաստանի հայթանակի համար հայերի մեջ

Հոգ պատրաստողներից մեկը, միաբանության մեջ համախոհներ ուներ և, ի հարկե, նաև հակառակորդներ։ Պատանի Աբովյանն իր համակրություններով հակված էր դեպի ներսեսականները։ Վերջիններն էջմիածնում հող էին պատրաստում Ներսեսի համար, նրա գալսոյան հետ հույսեր և ակնկալություններ կազում։

1827-ի հոկտեմբերին ոռւսաց զորքերը Երևան մտան։ Հայաստանն անցավ Ռուսաստանին։ Աբովյանի և նրա համախոհների բաղձանքը կատարված էր։

1828-ին, երբ արդեն պատերազմը վերջացել էր, երկիրը դրեթե խաղաղել, Եվրոպեմ կաթողիկոսը վերադարձավ էջմիածնին։ Կաթողիկոսի վերադարձից հետո, Աբովյանը կարգվեց «թարգման և գրագիր նորին վեհափառության»։ Այս պաշտոնը մեծ կարու տվեց Աբովյանին։ Բայցի այս, նա յավ գիտեր գրաբար, ինչպես և ոռւսերեն։ Զունենալով իր երկրորդը միաբանության մեջ, վանքի համար Աբովյանը

զարձակ շատ կարևոր եւ պրեթե անփոխարինելի անձնավորություն:

Բռլորը նրան բախտավոր էին համարում, եքանի տալիս: Բայց նա ինքն իրեն գըժբախտ էր զգում:

Ի՞նչն էր դրա պատճառը:

Էջմիածին վերադառնալով՝ Արովյանը բերել էր, Նաղարյանի խոսքով՝ ասած, «յուր սրտի մեջ մի վառ ուսումնասիրության կրակ»: Հիբռովի, Արովյանին այրում էր ուսում ստանալու, կրթված մարդ դառնալու զաղափարը: Երազները հանդիսան էին տալիս նրան: Որոգայթների անվերջանալի շարանը, դավերն իրար դեմ, կըռոիվները, բամբասանքները, որ վանականների մեծ մասի հոգեկան սնունդն էին կարմում, Արովյանին զգվեցը էին: Դեռ այն ժամանակ նա մի ամբողջ գլխով բարձր էր կանգնած վանական ճահճուտից: Նա ուզում էր հեռանալ, դնալ սովորելու: Բնդառաջող չկար: Անտոն եպիսկոպոսի ջանքերն՝ իր սանին Աստարիսանի, Աղաբարյան դպրոցում տեղավորելու՝ արդյունք

չէին տվել: Իսկ Անտոնի մահից հետո այդ մասին մտածող անգամ չկար: Զանում էին դայթակղեցուցիչ խոստումներով հրաժարեցնել նրան իր բարձր ծրագրերից: Հոգեկորական բարձր կոչումներ էին խոստանում— վարդապետություն, եպիսկոպոսություն: Այդ փառքը, սակայն, պատաճուն չէր հմայում: Նա մտածում էր իր հոգեկան աշխարհի կատարելության մասին:

1828-ին Ներսես Աշտարակեցուն թեսարիա ուղարկեցին: Սա աքսորի նման մի բան էր: Դա մի փորձ էր հեռացնելու, կղզիացնելու մեկին, որի ազդեցությունը միաբանության և նրա գործերի վրա շատ ավելի էր, քան նույնիսկ կաթողիկոսինը: Բացի այդ, որ ամենագլխավորն է, Ներսեսի վարած քաղաքականությունը Հայաստանում, Երևանի ժամանակավոր Վարչության անգամ եղած ժամանակ, ոռու պետականությանը կասկած էր ներշնչում: Ներսեսը, Պատկեմիչի խոսքով ասած, հայ հոգեկորականության և մանավանդ իջմիածնի վանքի շահերը գերադասել է պետական շա-

հերից : Ներսեսի աքսորը փշբեց նրա կուտակիցների երաղանքներն ու սպասումները :

1829-ին մի խումբ հոգևորականներ միտք են հղանում Միթարյան միաբանության օրինակով ընկերություն հիմնել : Նոր մեաբանությունը պետք է դորձեր Աևանի կղզու վրա՝ իր չուրջը համախմբելով այն ժամանակվա լուսամիտ հոգևորականներին : Միաբանության նպատակն էր զբաղվել հայագիտությամբ, տպարան հիմնել, գրքեր հրատարակել, ձեռագրեր հավաքել, դպրոց ու դրադարան բանալ, մի խոսքով լուսավորություն տարածել : Նոր միաբանության անդամներից էր լինելու նաև Աբովյանը : Մի որոշ ժամանակ դադանի է պահպամ միաբանություն հիմնելու դադագիարը, բայց հետո, երբ արդեն մշակված էր գործունեության ծրագիրը, հարցը հասնում է կաթողիկոսին և սինոդին ի համատառություն : Միաբանություն հիմնելու դադագիարն ազգային ինքնաճանաչության նախանշաններից էր : Այդ նշանակում է, որ լուսավորությունն ու առաջադիմու-

թյունն արդեն սկսել էին թևածել խաղաքամածած աշխարհի վրա : Բայց Եփրեմ կաթողիկոսը, որ Բողենշտետի ասելով, սըրտանց թշնամի էր ճշմարիտ քաղաքակըրթության և գիտության, իր սառն անտարբերությամբ գործը լուսավոր մատնեց :: Զարմանալի էլ չէ : Լուսավորության տեղի խայտառակ կուլմներ, բամբասանքներ. առաջադիմության վոխարեն — քստմնելի դավեր ու որոգայթներ, — ահա վանական միջավայրը, որ խեղդում, ոչնչացնում էր ամեն ազնիվ ձգտում, ամեն բարձր և լուսավոր միտք :

\*\*\*

1829-ի ամռան վերջերին, Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտն իր մի քանի ընկերներով Հայաստան եկալ Աբարատի գաղաթը բարձրանալու : Պարրոտին հարկավոր էր թարգման : Միակ և հարմար թեկնածուն Աբովյանն էր : Բացի տեղական լեզուներից՝ հայերենից, աղբյ-

բեջաներենից և պարսկերենից, նա գիտեր նաև ուսւերեն: Հանդիպման առաջին պահից երիտասարդը գրավում է անվանի ձանալպարհորդի ուշադրությունը: Դեպի գիտությունն ունեցած իր ծարավով, իր համեստ ձգուումներով, սակավապետությամբ և ջերմեռանդությամբ, ինչպես և իր մտքի հստակությամբ, սրտով և կամքի կայունությամբ, Արովյանն ամբողջապես նվաճում է Պարրոտի սերն ու համակրությունը:

Սեպտեմբերի 9-ին Պարրոտի արշավախումբը դուրս եկավ Էջմիածնից: Հասնելով Սև-ջուր, ուղևորները մի օր մնում են այստեղ, ապա մեկնում Ակոռի գյուղը, որ լեռան ստորոտում էր դտնվում: Նրանք տեղավորվում են ո. Հակոբի վանքում:

Հետեյալ օրը Պարրոտը, գորպատյան ընկերներից մեկը, Ակոռի գյուղացիներից Սահակը, որ շատ լավ ծանոթ էր տեղին և լեռան, և մի զինվոր՝ սկսում են վերելքը: Նրանք փորձում են բարձրանալ արևելյան

կողմից: Վերելքը տևում է երեք օր և ունենում է անհաջող վախճան:

Սեպտեմբերի 18-ին արշավախումբն իր երկրորդ վերելքն է սկսում: Այս անդամ ուղևորների խումբն ավելի մեծ էր: Արովյանը թախանձում է Պարրոտին՝ իրեն էլ վերցնել: Պարրոտն սկզբում չի համաձայնում, ասելով, որ առանց սրածայր դաշտանի և երկաթագամ կոչիկների գժվար կլինի: Բայց հետո, անկարող լինելով ընկճել պատանու ողերությունը, դիջում է: Այս անդամ արշավախումբը վերելքն սկսում է արևելյան կողմից: Դաժան սառնամանիք է լինում: Ուղևորները մի կերպ հասնում են Քեփ-դյուլ կոչվող վայրը և այդտեղ էլ գիշերում: Հաջորդ օրը, կանուխ առավոտից շարունակվում է վերելքը: Մի փոքր բարձունք էլ կտրելով ուղևորները հանդիպում են ձյան մի այնպիսի բքի, որ վերելքը շարունակելու դեպքում իրենց կյանքը վերահաս վտանգի տակ էին դնելու: Գիշերով ուղևորները վերադառնում են վանք և, վատ եղանակ-

ների պատճառով, սպասում մի քանի օր։  
Սեպտեմբերի 27-ին արշավախումբը վերելքի երրորդ փորձն արավ։ Պարրոտի դրավատյան ընկերները հրաժարվեցին մասնակցել։

Դժվար ու ծանր էր երրորդ վերելքը։ Երկու դիշեր ուղևորները պատսպարվում են մեծ քարերի արանքում, խարույկ վառում, տաքանում։ Մի քանիսը թուլացած ընկնում են ճանապարհի կեսին։ Մնացածները շարունակում են վերելքը։ Հենց որ երեսում է գագաթը, բոլորը մռուացած վերելքի անսաելի տանջանքները՝ չտապում են ժամ առաջ ուրք դնել լեռան գագաթը։

Սեպտեմբերի 29-ին, օրվա կեսին, վերելքի մասնակիցները, թվով վեց հոգի, ոտք դրին Արարատի կատարը։ Արշավախումբը կես ժամ մնում է գագաթի վրա։ Եվ մինչև արեւ կթեքվեր, Պարրոտը երկրաբանական չափումներ էր կատարում, իսկ Աբովյանը դիտում էր առաջ բացված դմայլելի տեսարանը։

Պատանի կրոնավորն անվանի գիտնակա-

նի առաջ բացում է իր սիրաը։ Նա հայտնում է տարիներով փայտիայած իր իզձը՝ զնալ սովորելու, մաղլցելու դիտության բարձումքներով, որ մարդու միտքն ընդլայնվի, ազնվանն հոգին, բաղձալի կատարելության հասնի։ Լեռան գագաթին, այդ նվիրական պահին, Պարրոտը երդվում է ազատելու նրան տղմից, տանելու հետը դեպի լույս։

Վերելքի մասնակիցները, երբ արդեն օրը երեկոյանում էր, հրաժեշտ են տալիս դագաթին։ Նրանք գիշերում են լեռան կըրծքին և մյուս օրն անվտանգ հասնում վանք։

Պարրոտը մեկնեց։ Նա խոստացավ միջնորդել ուր և ում հարկն է և անպայման ձեռք բերել Աբովյանին Դորպատ՝ ուսման ուղարկելու հարկավոր իրավունքը։ Պարրոտից հետո՝ Աբովյանը թաղվեց վարդադույն երազանքների մեջ։ Նա գուրգուրում էր իր ապագա կյանքի գալուստը։ Հոկտեմբերի 29-ին նա դիմում է ներկայացնում սինողին, որպեսզի թույլ տան իրեն

Դորպատ մեկնել՝ բարձրադույն ուսում  
ստանալու; Սկիզբ առան բամբասանքն ու  
զրպարտությունը: Կաթողիկոսից սկսած  
մինչև վերջին վանականն սկսում են հոր-  
դորել Աբովյանին հրաժարվելու Պարբոտին  
տված խոսքից: Հլու-հնազանդ մնալ իջմի-  
ածնին և, ինչպես առաջ, այնպես էլ այսու-  
հետ, վանքի կամարների տակ, ծունկի ե-  
կած, աղոթքներ մրմնջալ—այս էր նրանց  
պահանջը:

Աբովյանը համառ և անդրդվելի մնաց:  
Բայց նրան միշտ չէր հաջողվում լուս ար-  
համարհությամբ բարձր կանդնել այդ  
դառնավայրից, չնչին ու խեղճ մարդկանց  
հասարակությունից, վոր ճահճի նման  
ցած էր ձգում վե՛ր, դեպի վե՛ր սալառ-  
նող հողին:

Անպակաս էին ծաղրը, հալածանքը: Դա  
ուներ իր խորունկ պատճառները: Պատ-  
ճառներից մեկն էլ Արարատի դադաթը-  
բարձրանալն էր: Այն ժամանակ բերնե-  
րերան էր անցնում մի չին առասպել: Իրը  
թե սուրբ Հակոբը փորձում է բար-

ձրանալ լեռան գլուխը՝ իր աչքով տեսնե-  
լու նոյան տապանը: Մի քիչ բարձրա-  
ցած՝ սաստիկ հողնում է, ուժասպառ ընկ-  
նում: Լայակումած աղոթում է: Արտասուրքը  
դառնում է մի աղբյուր: Հանդիսատ առնե-  
լով՝ ծերունին շարունակում է վերելքը  
դժվարին առապարներով: Քիչ է մնում,  
որ համար լեռան կատարը, բայց այլևս  
կորցրած ամեն ուժ և կարողություն, ու-  
ժասպառ ծերունին ընկնում է խոր քնի  
մեջ: Երազում հայտնվում է մի հրեշտակ  
և ասում:

— Հակո՛բ, Հակո՛բ, տերը խեց քո ա-  
ղերսանքը ահա քեզ մոտ է տապանի մի մա-  
սը, վերցրու և դնա: Եվ իզուր մի տքնիր  
տեսնելու այն, ինչ աստծո կամքով մար-  
դուց անտես պիտի մնա:

Եեվ մի պատանի, որին, ըստ Երեսութին,  
շատ լավ հայտնի էր այդ առասպելը, խի-  
ղակել էր բարձրանալ լեռան գագաթը,  
ոտք դնել նվիրական սրբավայրը: Աստվա-  
ծավախ կրոնավորների համար այդ մի ան-  
սովոր և հանդուգն քայլ էր: Այդպիսին,

Նրանց կարծիքով, անպատիժ չպետք է  
մնար:

Էջմիածնի միաբանության մեջ բոլորը  
երես դարձրին Աբովյանից: «... Ուր որ  
միայն գնում եմ, վիշտը և խռովությու-  
նը ստվերի նման դալիս են իմ ետևից», —  
զանգատվում է հոգեկան խռովքի մեջ ըն-  
կած Աբովյանը: Նրա միակ միսիթարու-  
թյունն ու անբաժան ընկերը ապագայի  
հույսն էր, Դորպատ ընկնելու փափադը:

Հակառակի պես Պարբութից ոչ մի լուր  
չկար: Վանքում փսխոց անցալ. եվրո-  
պացին խաբել է հայ պատանուն: Հուսա-  
հատության հասած Աբովյանը մի խնդրա-  
գիր ուղարկեց կայսեր: Իր խնդրագրի մեջ  
Աբովյանն ասում է, որ դեռ շատ հին ժա-  
մանակներում ազգօգուտ նպատակներով  
մեր նախնիները պատանիներին ուղարկում  
էին Աթենք՝ գիտություն, լուսավորություն  
ձեռք բերելու: Այժմ, ասում է Աբովյանը,  
երբ մեր այժմյան երջանկությանը նախնիք  
անդամ կնախանձեն, մի՞թե ուսման դնա-  
լու իր բաղձանքը մնալու է անկատար:

«... Զորս ամենայն աւուրս հառաջանօք  
անցուցանեմ, առ որ եղի ի մտի այժմ կամ  
հասանել բաղձանաց իմոց, կամ տալ զան-  
ձըն իմ ի վտանդ կորստեան» — գրում է  
Աբովյանը կայսեր իր «խոնարհամատոյց  
պաղատանքի» մեջ:

Անհամբեր՝ Պարբութից կամ թագավորից  
թույլտվությունն ստանալու, մի վերջին  
փորձ է անում Աբովյանը: Դիմում է Եվ-  
րեմին: Պատանուն հաջողվում է թախան-  
ձագին աղերսանքով կոտրել կաթողիկոսի  
համառությունը: Եփեմը կոնդակ է ար-  
ձակում, որով թույլատրում է Աբովյանին  
սովորելու գնալ: Բայց այս անդամ էլ,  
ինչպես երևում է, արգելք են լինում ծը-  
նողները, որոնք չեն ուղում ղարիբության  
մատնել իրենց որդուն:

Հուսախարության պահեր շատ ունեցավ  
ուսումնածարավ պատանին, մինչև որ  
1830-ի գարնանամուտին ստացվեց Պարբո-  
ւթի նամակը Աբովյանի անունով: «Սիրելի  
բարեկամ, — գրում է Պարբուն այդ նա-  
մակում, — ձեր վիճակը որոշված է, կա-

տարվել է՝ ինչ ցանկանում էիք: Անհամ-  
բեր սպասում եմ ձեր ուրախաբեր գա-  
լլստյան»:

Արովյանն իր բախտն այլևս վճռված էր  
համարում: Երազանքը դառնում էր իրա-  
կանություն: Նա այլևս շրջապատված չէր  
լինելու բամբասանքներով, դավերով: Ա-  
րովյանը հեռանալու էր վանքից, որի ծը-  
խամած կամարների տակ կարող էր մի-  
այն նրա ճախրանքի ընդունակ հոգին չատ  
չուտ հանգչել, ծխացող մոխիր դառնալ:



Հրաշեժոի պահին մի խումբ հոգեորա-  
կաններ հարձակվում են նրա վրա, խլում  
շրերն ու ճամբի պաշարը, մի խոսքով՝ ա-  
նարդ կերպով վոնդում նրան վանքից երբ  
անհավատի: Միակ հարազատ վայրը, ուր  
կարող էր պատանին թափել իր հոգու  
դառնությունը, հայրենի տունն էր: Սիրե-  
լի ծնողների գերկն ընկած ապագա պան-  
դուխտը գտավ իր վերջին միիթարու-  
թյունը: Արովյանի մեջ այնքան ուժգին

էր Դորպատ գնալու փափագը, որ այս ան-  
դամ նա ուշադիր չեղավ նույնիսկ ծնող-  
ների պաղատանքին: Եվ «արտասվալիճ  
աչօք» հրաժեշտ տվեց նա ծնողներին, հայ-  
րենի խրճիթին և ճանապարհ ընկավ դեպի  
Դորպատ: 1830-ի սեպտեմբերի առաջին  
օրերին Արովյանը հասավ Դորպատ: Արո-  
վյանը մի նոր և անծանոթ աշխարհ էր  
ընկել: Առաջին օրերը խորթություն էր  
դրում նոր միջավայրում. մի տեսակ հրնց-  
վում էր. կամ, ինչպես ինքն է ասում,  
«սրտնեղությունք» զգում:

Սեպտեմբերի 29-ին Պարուտի տանը հաց-  
կերուցի կար: Հրավիրված էին չատ հյու-  
րեր, գիւտավորապես պրոֆեսորներ: Մի  
խոսքով՝ այնտեղ էր հավաքվել Դորպատի  
գիտական միտքը: Հրավիրվածների մեջ էր  
նաև Արովյանը: Օքը նշանափոր էր. բո-  
տորել էր Արարատի գագաթը բարձրանալու  
առաջին տարին: Այդ երեկո Պարուտը  
հյուրերին ներկայացրեց իր հայ բարեկա-  
մին, որը նշանափոր վերելքի ամենալըստ-  
սեր մասնակիցն էր: Բոլորը շրջապատեցին

նրան, պովեցին նրա եռանդը, լուսավորության ձգտումը։ Հյուրերի խնդրով Աբովյանը կարդաց Արարատի դադաթը բարձրանալուն նվիրված իր մի բանաստեղծությունը գրաբարությանը։

Պարրոտի խորհրդով Աբովյանը համալսարան չընդունվեց։ Գերմանացի պյուֆեսորն այն կարծիքին էր, որ Աբովյանը մասնագիտական կրթություն չպետք է ստանա, եթե, իհարկե, ցանկանում է իր ժողովրդին օղտակար լինել։ Պարրոտը խորհուրդ էր տալիս նրան ուսանել այն բուրը, ինչ որ կարող է հարկավորվել մի ուսուցչի, որը պետք է վերադառնա երկիր՝ գործիտություն, լուսավորություն տարածելու։ Եվ ժողովուրդը, — զգուշացնում էր Պարրոտը նրան, — Երբեք չի մոռանա աղոյիսի մարդու երախտիքը։ Ճաշին մեծ մասմբ Աբովյանը Պարրոտների մոտ էր լինում, իսկ երեկոները՝ Գորասսի, որ Պորապատի Երիտասարդ՝ պյուֆեսորներից էր։ Մի բաժակ թեյի շուրջ նստած հայ և գերմանացի երիտասարդները զրուցում է-

ին, պարապում։ Գրասսը ոչ միայն աչխարհագրական գիտելիքներ էր հաղորդում իր հայ բարեկամիններին և այլն գերմանական բանաստեղծության սքանչելի նմուշներից էր կարդում նրան։ Գրասսի սիրալիք վերաբերմունքը, բնության պարզությունն ու անմիջականությունը համբակում են Աբովյանի զգայուն սիրտը։ Գրասսն իր մտերմին ծանոթացնում է ուրիշ երիտասարդների հետ։ Հետզհետե Աբովյանի ծանոթների շրջանն ընդլայնվում է, մեծանում։ Ամենուրեք շրջապատված զուրկուրանքով, բարեկամական հոգատարությամբ, մշտական ուշադրությամբ՝ Աբովյանը կամաց-կամաց ընտելանում է նոր միջավայրին, նրա վարքը ու բարքին։

Պարրոտի բարեկամներն ու ծանոթները, որ մեծ մասմբ գիտնականներ էին, սիրով պարտավորություն առան օգնել հեռավոր երկրից եկած հայ պատանուն։ Պարրոտը նրա հետ պարապում էր գերմաներեն և այլ առարկաներ։ Պրոֆեսոր Բայումբերդը նրա հետ անցնում էր պատմություններ, պրո-

Փեսոր Ֆրիդլենդեր՝ թվաբանության, իսկ  
Գրասսը՝ աշխարհագրություն։ Ուրիշներն  
էլ պարապում էին բնագիտություն, փիլի-  
սոփայություն և այլ առարկաներ։ Կարճ  
ժամանակից Արովյանը գերմաներենին տի-  
րապետում է գրեթե իր կատարելության  
մեջ։ Պրոֆեսորները վկայում են, որ նա  
շատ շուտ սովորեց գերմաներեն գրել  
կարդալ, իսկ խսում էր այնպիս, որ դժ-  
վար էր նույնիսկ կասկածել, թե նա հայ  
է և ոչ գերմանացի։ Նա սկսում է սովորել  
Փրանսերեն, որին մի փոքր ծանոթացել էր  
Ներսիսյան դպրոցում։ Կատարելագործում  
է սուսերենի իմացությունը, ձեռնարկում  
է լատիներեն սովորելուն։

Դորպատյան տարիներն Արովյանի մտա-  
վոր կյանքի հասունության շրջանը եղան։  
Թիֆլիսում, հետո էլ էջմիածնում, նա մո-  
տիկից ծանոթացել էր հայ պատմիչներին։  
Միայն այժմ նրա միտքն սկսում է հածել  
աշխարհի մեծագույն քերթողների գրքերի  
վրա։ Դորպատը բազում առիթներով ոռ-  
մանտիկական ներշնչումների աղբյուր էր։

Դորպատում էր այդ ժամանակ Ֆրիդրիխ  
Կլինգերը, որի մի դրամայի («Sturm  
und Drang») անունով էլ մկրտվել էր  
վաղ ոռմանտիկական ուղղությունը գեր-  
մանական դրականության մեջ։ Ծանոթ  
է եղել Արովյանը նրա հետ, թե ոչ,  
հայտնի չէ, բայց անկարելի է, որ նա տե-  
սած չլինի համբավավոր ծերունուն՝ որ  
շրջելով Դորպատի փողոցներում՝ դոր-  
պատյանների հիշողության մեջ ողեկոչում  
էր այն աղնիվն ու բարձրը, որ քարոզել էր  
Sturm und Drang-յան («Գրոհի և փոթոր-  
կի») ոռմանտիզմը։ Տիրելով գերմաներե-  
նին՝ Արովյանը դիշերներ է լուսացնում  
Գյոթեի ու Շիլերի գրքերի վրա։ Ասում են,  
որ Արովյանը Շիլերին ջրի պես դժեեր։  
Եվ դեռ Դորպատում Արովյանը հայերեն է  
թարգմանում Գյոթեի ու Շիլերի բանաս-  
տեղծությունները։ Նա բնագրով կարդում,  
ծանոթանում է Լեսինգին, Հերդերին։ Արո-  
վյանը կարդում է Ռուսոյին, ողեռվում  
նրա գաղափարներով։ Իսկ շատ տարիներ  
հետո, ըստ երեսոյթին, Երևանում ձեռնար-

կում է «Եոր Էլուղի» թարգմանությանը :  
Լատիներենն օդնում է նրան ծանոթանալու  
անտիկ դրականությանը . կարդում է չո-  
մերուին, Սոֆոլեսին, Հոռվմեականից՝  
Վիրպիլիոսին, Հորացիուսին, իտալականից՝  
Դանտեին, Պետրարկային : «Իլիականից»  
հատվածներ է թարգմանում : Անձամբ ծա-  
նոթանում է ուսւական ուժանտիզմի մե-  
ծագույն ներկայացուցչին, ԺուլիոսԿուն,  
որն իտալիայից վերադառնալով Բուսաս-  
տան, Դորպատում մի քանի օր կանդ ա-  
ռավ : Մի պրոֆեսորի տանը, ճաշի ժամա-  
նակ Աբովյանը և ԺուլիոսԿունը ծանոթանում  
են : ԺուլիոսԿունը, իմանալով, որ Աբովյանը  
հայ է, մոնթանյան ողջույն հաղորդեց ա-  
րարարայան Երկրի զալակին : Թարգմանում  
է Կարամզինին : Փիլիսոփաներից ծանոթա-  
նում է Լայբնիցի, Զեղելի, մանկավարժնե-  
րից՝ Նիմայերի, Կամպեի, Կրաուլեի և ու-  
րիշների գործերին :

Դորպատոյան միջավայրն իր կնիքը դրեց  
Աբովյանի քաղաքական հայացքների վրա :  
Են, Երկվությունը, որ նկատելի է Աբո-

վյանի մտայնության մեջ, մեծ մասով  
ակունք է առնուամ Դորպատից : Դորպատ  
նոր եկած Աբովյանի հոգերանության ու  
մտածական աշխարհի մեջ զիեր կային,  
որ, անշուշտ, արդյունք էին էջմիածնական  
մթնոլորտի ազգեցության : Հայրենասիրու-  
թյունն Աբովյանի մոտ այժմ մի նոր ե-  
րանդ ստացավ, իր ակունքն առնելով ել-  
րոպական լուսավորական շարժման գաղա-  
փարներից : Բայց Աբովյանի հայացքների  
կաղապարման վրա մեծ ազդեցություն ու-  
ներ նաև Դորպատի անմիջական շրջապա-  
տը : Աբովյանի աչքի առաջ անցավ Բուր-  
շենչափտ կոչվող զաղտնի ուսանողական  
ընկերության դատը : Զէր կարող նրա վրա  
ցնցող ազդեցություն չժողնել այն դաժան  
կարգն ու կանոնը, որի կրնկի տակ արոր-  
վեցին երիտասարդ դորպատականների աղ-  
դային լուսավորական աղնիվ երազանք-  
ները : Բացի այդ, անպայման Աբովյանի  
ականջին հասավ Բելգիայի անկախության  
համար մզկող կովկի թնդյունը : Բելգիա-  
կանին անմիջապես հաջորդեց ապստամ-

բություն Աեհաստանի ներսում : Հազվակ թե  
այդ պոռթկումները հուղումնալից զրույց-  
ների տեղիք չտային այն երիտասարդական  
շրջաններում , որտեղ Աբովյանը լինում էր :  
Պատահող քաղաքական իրադարձություն-  
ները պատճեա առիթ էին երիտասարդի հայ-  
րենասերի համար զուգահեռագծեր անց-  
կացնելու ապստամբ ժողովուրդների և  
իր ժողովրդի բախտի ու ճակատադրերի  
միջև : Զէ՞ որ այդ բոլորն արդյունք էր  
այն ազգային ճնշումների , որոնց հնդակա-  
նի մյուսների հետ և Աբովյանի ժողո-  
վուրդը : Բայց այն մարդիկ , որ անմի-  
ջապես շրջապատում էին Դորսպատում  
Աբովյանին , մեծ մասամբ չափավոր  
հայացքների տեր մտավորականներ էին :  
Զի կարելի ասել , թե նրանց խորթ էր  
ազատության գաղափարը : «Յազատութենէ  
յառաջանա ամենայն բարիք»—ասում է  
պրոֆեսորներից մեկն Աբովյանին : Բայց  
ժամանակմեական սապոդի կրոններ անխըլ-  
ճուրեն ճգմել էր ամեն մի հանդուգն միտք :  
Պարբռում , որի հորդորներն ու զրույցները

միշտ լսում էր Աբովյանը , զբուշացնում  
էր հեռու մնալ խոռվարար երիտասարդնե-  
րից , չչիվել նրանց հետ , չստեղծել վը-  
տանդավոր կապեր : Պատահած քաղաքա-  
կան իրադարձությունները Պարբռուի զը-  
րույցների ազդեցության տակ կորցնում է-  
ին իրենց ոոմանափեկան հմայքը : Նա  
կարողացել էր Աբովյանին խոր երախտա-  
գիտության զգացում ներշնչել դեպի ցա-  
ըը , որ «Ընդպառաջ էր դնացել նրա բաղ-  
ձանքին» , միջոցներ տվել սովորելու , ու-  
սում ստանալու : Դրա հետ միասին նույն  
Պարբռու աշխատում եր վառ պահել Ա-  
բովյանի մեջ հայրենասիրության կրակը :  
Նրա քաղաքական հայացքների չափավո-  
րությունը չէր խանգարում , որ նա միշտ ,  
անընդհատ , դրեթե ամեն որ ներշնչի Ա-  
բովյանին՝ կյանքի ողջ եռանդը նվիրաբե-  
րել սեփական ժողովրդի լուսավորության  
կործին : Եվ ոչ միայն Պարբռու : Բուր-  
գերը և ուրիշ պրոֆեսորներ լուսավորու-  
թյան մեջ էին տեսնում հայերի փրկու-  
թյունը . արթնացնել ազգային հոգին , լու-

սավորել, դրանից հետո «մնացածն ինքն իրեն կլինի»։ Երբ մի ժողովուրդ լուսավորված է, դժվար է նրան քաղաքական ստրկացման ենթարկել, և, վերջապես, այդպիսի մի ժողովուրդ կունենա այնքան ազգային արժանապատվություն, որ թույլ չի տա իրեն ճիշդուահար անելու։ Լուսավորություն տարածել ժողովրդի մեջ, քաղաքակրթել երկիրը, ապա նոր, մի ընդհանուր և միասնական հայրենիքի մասին մտածել։

Ահա այս քաղաքական մտայնությունը ներշնչեց նրան դորպատյան միշտավայրը։

Ասում են, որ «Հայրենի երկրի կարուր հանդիսատ չէր տալիս նրան»։ Պատմում են, որ Աբովյանի տան առաջ մի մենավոր ծառ է եղել։ Պանդուխտ երիտասարդը լուսնկադիրին նստում էր այդ ծառի տակ, մեջքը բնին դեմ տալիս, աչքերը երկնքին զցած՝ զրուցում լուսնի ու աստղերի հետ հայրենի աշխարհի մասին։ Շատ անգամ էլ արցունքն աչքերին երգում էր, ու այդ կարուրի երդերի վրա իշխում էր մի ան-

հուն թափիծ։ Հայրենիքից տխուր լուրեր էր առնում։ Վախճանվում է հորեղբայրը, ավաղակների ձեռքով սպանվում է ուսուցիչը— Ալամդարյանը։ Աբովյանը վշտից անկողին է ընկնում։ Բարեկամները շրջապատում են նրան, որ շատ չտրտմի։ Բայց դժվար էր ամոքել նրա վերքը։ «Լուսահողի հոր հիշատակին» մի սրտառուչ բանատեղծություն է զբում։ Իր մի ծանոթի ուղարկած հողվածն Ալամդարյանի մասին թարգմանում է գերմաներեն և հրատարակում տեղական թերթերից մեկում։ Ալամդարյանի պատճառով ընդհարվում է «Северная пчела»-ի («Հյուսիսային մեղու») իմբրագիրը, ուսւ դրող, երրորդ բաժանմանքի լրտես՝ Բուլղարինի հետ։

Եթե Աբովյանը զլուխ չխոնարհեց Բուլղարինի առաջ, ինչպես կաներ երեխ մի ուրիշը, եթե Աբովյանը վրդովված սպանաց նրան՝ «Ես ձեզ ցույց կտամ ձեր տըմարդությունը», ապա դրա պատճառը այնքան այն չեր, որ մեկը, ասենք, Բուլղարինը հարկավոր ուշադրությամբ չկե-

րաբերվեց դեպի իր անձը, նույնիսկ արհամարհեց, որքան այն, որ Բուլղարինը վիրավորել եր և իր ժողովրդի ազգային արժանապատվությունը։ Ազգային արժանապատվության զգացումը Աբովյանի մեջ միշտ էլ շատ ուժեղ է եղել։ Այդ տեսակետից ուշագրավ է մի դեպք։ Դորպատում մի սպա հարցնում է Աբովյանին, թե նա պարսիկ ուսանող չե՞։ — «Ո՛չ, ես հայ եմ, — սպատախանում է Աբովյանը, և, նկատելով, որ սպան ծաղրանքով է ընդունում իր ասածը, վրդովված ասում է. «Հայ անումը պարծանք է ինձ համար և ես չեմ փոխի այն աշխարհի բոլոր փառքերի հետ»։

Նրա միտքը շատ հաճախ թե առաջ թռչում էր դեպի հայրենի լեռներն ու ձորերը։ «Ի գիշերի և ի տուրնջեան սլանան, վերանան ի միտս այն նաղելի կողման Արարատայ, —յորս երթեմն խաղայի զիսաղ ոսկեղեն մանկութեան իմոյ»—հառաչանքով դրում է Աբովյանն իր մի նամակում։ Ե՞րբ նորից պետք է, — հարցնում է նա, — իր աչքերը տեսնեն հայրենի ծուխը, Ե՞րբ պետք

է կրկին ծիծաղաղեմ իր առաջ ելնեն Հայաստանի վեռները, Ե՞րբ պետք է դարձյալ ծծի անմուանալի հայրենիքի ծաղկաբերդաշտերի վրայով նազանքով անցնող հարավային մարմանդ զեփյուռը։ Պանթեիստ Աբովյանի մեջ նատած էր խանդավառ հայրենասերի հոգին։ Օր ու գիշեր նրան մտատանջում էր հայրենիք վերադառնալու, ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու միտքը։ Այդ գաղափարը նրան այնքան էր զբաղեցնում, որ մի գիշեր էլ երազ է տեսնում՝ իբր թե ինքն արդեն Հայաստանումն է, եկեղեցում հասարակության առաջ քարոզ է ասում։ Հանկարծ ներս է մտնում Պարրոտը։ Պատկառանքից Աբովյանը կարկառում է, մինչև որ անվանի գիտունը խրախուսական խոսք է ասում. «Սովորեցրեք հայ մանուկներին, սովորեցրեք, ինչո՞ւ լրեցիք»։ Այս մի հատիկ օրինակն էլ բավական է գաղափար կազմելու, թե ինչ խոհեր ու հույզեր էին փոթորկում ապագա առաքյալի միտքը։

Եթե ուզեր, նա կմնար այդ լուսավոր-

ված աշխարհում, ապահով ու հանդիսականը կատեղեք իրեն համար: Շատ գըժվար էր հեռանալ և այլես չդառնալ Դորպատ, ուր այնքան շատ բարեկամներ ու ծանոթներ ուներ, ուր չքնաղ Լուստեն, որի հետ կապված եր հոգու նվիրական զգացումներով, նրան այնքան հրձվանք ու բերկրություն բերեց: Այո՛, շատ բան նրան կապում էր Դորպատի հետ, սակայն մնալն այլես անկարելի էր: Արովյանը չէր ուզում նոյան ազոավ լինել: Նա երբեք չմոռացավ, որ ինքը, գեռ քսանամյա պատաճի, Արարատի գագաթին ուխտ էր կապել գնալ, սովորել, վերադառնալ երկիր, դործել ժողովրդի մեջ: Հայրենիքն սպառում էր: Պետք էր շոտապել:

1836-ի դարնանն Արովյանը հրաժեշտ տվավ Դորպատին: Նա վերադառնում էր Հայրենիք հեղաշրջված: Դորպատյան կյանքը մի շատ կարեռ, ճակատագրական դարձակետ եղավ նրա կյանքում:

Դա եղավ նրա երկրորդ ծնունդը:  
Արովյանը մեկնել էր Դորպատ դրեթե

միջնադարյան հայացքներով, սահմանավակ գիտելիքներով, բնավորությամբ կատարելապես նահանգետական գեղջուկ, ասիական հետամնացության դրոշմը մտքի և հոգու վրա: Այժմ այնտեղից նա դառնում էր իրու մի լուսավորված, կրթված մարդ, գիտուն, բազմահայաց, կատարյալ եպուպացի: Ահա թե ինչ է վկայում նրա մասին մի անհայտ Փրանսիացի, որ հանդպել է Արովյանին հայրենիք վերադառնալուց հետո. «Արովյանի հետ տեսություն ըրի»— զրում է այդ Փրանսիացին հայ նշանավոց հրապարակախոս Ստ. Ուկանին, —և ստուգիվ զարմացա իր հմտության վրա: Գերմանական փիլիսոփայության և գրադիտության տեսլիներն իրեն այնքան ընտանի են, որ նույնիսկ եվրոպական մը օգուտ կրնաքաղեկ իր կարծիքներեն: Եիլլերը ջուրի պես գիտե. Լեսինկին, Լեյբնիսին կարծիքները մաղե անցուցեր է և իր առիական երկայայությունով անոնց նոր դույն մը կուտա: Գերմանացիի մը չափ կլսուի գերմաներեն լեզուն, և տարակույս չկա, որ

այս անձը հայ գրագիտության պատիվ ընե  
օր մը : Տարօրինակ երևույթ մարդկային  
լուսավորության . հայու մը բերան արձա-  
գանք է այնպիսի տեսիլներու, որք մեր մեջ  
դեռ նոր կտարածվին : Շիլլերին, լեսինկին  
դրությունները Կովկասի լեռներու մեջ  
կհաստատվին և լսելի կըլլան, մինչդեռ  
Եվրոպայի մեջ ժողովուրդ կա, որ այս  
հեղինակներու անունը անդամ լած չե :  
Զարմանալի բան պիտի ըլլա, եթե Ասիայի  
լուսավորությունը Կովկասեն սկսի և Բրո-  
մեթեին ժայռը տեսնե իր չարչարանքին  
արդյունք...» :

Նույն էր վկայում Բողենշտետը, երբ  
ասում էր, թե նա վերադարձավ  
Հայրենիք իրու գերմանական և ընդհան-  
րապես եվրոպական առաջավոր կուլտու-  
րայի առաքյալ արևելքում :



Արովյանն շտապում էր հայրենիք: Վար-  
դագույն հույսերի մեջ էր: Ճանապարհին  
դործուներության ծրագրեր էր կազմում :

Նա փափագում էր էջմիածնում եվրոպա-  
կան հիմունքներով դպրոց հիմնել, ժողո-  
վըրդական ուսուցիչներ պատրաստել: Բայց  
ավա'զ, մի խոր հիասթափություն էր  
սպասում նրան:

Թիֆլիսում նա հանդիպեց Հովհաննես  
Կարբեցուն: Արովյանը ներկայացավ Կար-  
բեցուն նախարարի հանձնարարական նա-  
մակով: Ինքնահավան կաթողիկոսին այդ  
դուր չեկավ: Ավելացրեք դրան և այն,  
որ Արովյանի հակառակորդներն արդեն  
կարողացել էին ներշնչել կաթողիկոսին  
այն միտքը, թե նա լութերական է, հա-  
վատից, եկեղեցուց չեղված: Կարբեցին  
նրան ընդունեց թշնամաբար: «Հրամանա՞ւ  
դաս ի վերայ իմ, վտարանդեալդ ի հա-  
ւատոյ, դու լաւ խմորել կարես զմիտս ան-  
մեղաց, այլ կրթել զնոսա չէ քո դործ»՝  
այս խոսքերով դիմավորեց կաթողիկոսն  
Արովյանին:

Արովյանը միայնակ մնաց: Բոլորը երես  
դարձրին նրանից: Նա այլես կովան չու-  
ներ: Հուսախար եղած Արովյանին հարկա-

վոր էր բոպե առաջ հրաժարվել էջմիածնի հետ կապած հույսերից, բայց նա այն ժամանակ այնքան ուժ և կորով չդուավ իր մեջ: Նա չկարողացավ այրել այն կամուրջները, վոր նրան կապում էին եկեղեցու հետ: Ինքն իր մտորումների հետ՝ Արովյանը դեգերեց Թիֆլիսում քաղցի մատընված: «Զամ մի և կէս մնացի ի Տփիխս՝ յետ վերադարձի իմոյ Եւրոպիոյ կարօտ և աւուրն պարենի», հիշում է Արովյանը տարիներ հետո:

Բայց այդպես շարունակել անկարելի էր: «Սահպեալ ի չքաւորութենէ մտի ի պաշտօն արքունական, զոր ոչ երբէք կամէի»—դրում է Արովյանը: 1837-ի փետրվարի 12-ին Արովյանը նշանակվում է Թիֆլիսի դավառական ուսումնարանի տեսչ պաշտոնակատար:

Երեսնական թ. թ., այսինքն Արովյանի ժամանակ, Թիֆլիսն Անդրկովկասի կուտարական կյանքի առանցքն էր: Դա մի բազմադիր լնտանիք էր՝ հայ, վրացի, ադրբեջանցի, ռուս, դերմանացի, Փրանտ

սիացի—որքան կուզեք: Ռուս հեղափոխականների համար Թիֆլիսը դարձել էր աքսորավայր: Դեկարտիստներից մի քանիսը, ինչպես և ընդհանրապես քաղաքական ապեսանքարեցույս ճանաչված ռուս մտավորականներն ու գործիչներն աքսորված էին Թիֆլիս: Այդ տարիներին, ինչպես և մի փոքր առաջ, Ռուսաստանում խուլ և լուեյայն, հեռուներում՝ ավելի բացահայտ, առաջալոր միաքը հուղված հետևում էր քաղաքական ունակցիային, որի կրնկի տակ տրորվում, ճգմվում էր ամեն ազնիվ ճըշմարտություն, ամեն բարձր միաք:

Պաշտոնի անցնելով Թիֆլիսում՝ Արովյանը պետք է աղբեր, չնչեր այդ մթնոլորտում: Անկարելի էր, որ նրան լավ չձանուչին քաղաքում, որովհետեւ Թորապատից էր եկեւ, համալսարանականի համբավուներ, յեղուներ գիտեր, մի խոսքով՝ իր ժամանակի երթված մարդկանցից մեկն էր, այսինքն՝ այնպիսի մեկը, որի նմանները չատ քիչ ու հաղվաղեալ էին այն ժամանակ Թիֆլիսում:

Ուսումնարանում Աբովյանը ծանոթանում  
է Միրզա Ֆատալի Ախունդովի հետ—  
աղբքեջանական նշանավոր գրող և փիլի-  
սոփիա, որի վրա Աբովյանը, անշուշտ, մեծ  
ազդեցություն է ունեցել։ Միասին նրանք  
աշխատում են մինչև 1840-ը։ Ուրիշ պաշ-  
տոնի անցնելու պատճառով, դպրոցը հո-  
ժարակամ թողած Ախունդովին փոխարի-  
նում է մի այլ ոչ պակաս նշանավոր գեմք,  
աղբքեջանական հայտնի բանաստեղծ, հե-  
տագայում համաելքրոպական հոչակ ձեռք  
բերած Միրզա Շաֆին, վորն ընկերների  
ըջանում, Բողենչտետի արտահայտու-  
թյամբ՝ «Գյանջայի իմաստունի» համբավն  
ուներ։ Պահպանվել է այն զեկուցագիրը,  
որով Աբովյանն անձամբ երաշխավորել է  
Միրզա Շաֆուն՝ բարձրագույն իշխանու-  
թյունների առաջ, դպրոցում նրան դասեր  
տալու համար, վկայելով նրա անձնական  
և իմացական արժանավորությունները։  
Ինչպես Ախունդովի, այնպես էլ առավել  
և Միրզա Շաֆուն հետ, Աբովյանը բարե-  
կամական անխախտ կապերի մեջ է եղել։

Լավը, ազնիվն ու մարդկայինը աղբքեջան-  
ցի և հայ գործիչներին միացրել էր մի  
ջերմ, անքակտելի բարեկամությամբ։  
Աբովյանը ծանոթություն է ունեցել  
վրացի մտավորական Զուբալաշվիլու հետ։  
Սու Նազարյանի վկայությամբ՝ Զուբա-  
լաշվիլին համամիտ էր հայ և վրացի ժողո-  
վուրդների վերածնության մասին ունե-  
ցած իր և Աբովյանի հայացքներին։ Զու-  
բալաշվիլին առաջին վրացին էր Եվրոպա-  
կան կրթությամբ։ Մի շարք լեզուներ է  
իմացել։ Դեռ այն ժամանակ բնադրով կար-  
դացել է «Այսկենդոն», շրջել է եվրոպական  
քաղաքները, Դորպատում ծանոթացել է  
Նազարյանի հետ։

Աբովյանի Թիֆլիսյան ծանոթներից էր  
նաև գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ  
Բողենչտետը, որի համար նա հավաքել էր  
քրդական և աղբքեջանական ժողովրդական  
երգեր։ Աբովյանը ծանոթ է եղել նաև  
ուկրաինական բանաստեղծ Ռոսկովչենկոյի  
հետ։

Այս էր նրա միջամայրը Թիֆլիսում։

Ուսումնարանում նրան զբջապատռմ է-  
ին հայ երեխանների հետ նաև վրացի և  
աղբբեջանցի մանուկներ: Մանկական աշ-  
խարհը, —ինչպես երեում է ֆրենին դրած  
նամակից —վաղուց ի վեր եղել է Աբով-  
յանի համար բոլոր երկրացին սրտահաճ  
քախտավորություններից ամենաբարձրը,  
նամանավանդ, որ այդ երկու հարյուրի  
չափ աշակերտներն իրենց սերն ու համա-  
կրությունն են պարզեցել նրան:

Աբովյանը հիմնում է նաև մի մասնավոր  
դպրոց: Սկզբում վահքի բակի միակ խը-  
ցում, իսկ հետո՝ իր տանը հավաքում է  
մի խումբ հայ, աղբբեջանցի և դերմանա-  
ցի երեխաններ, թվով 25 հոգի և պարա-  
պում հետներն իր ուղածի պես:

Ճանապարհորդ պրոֆ. Մորից Վագները,  
որ իր դքքում բավական էջեր է նվիրել Ա-  
բովյանին, պատմում է նրա աշակերտների  
ուսումնական առաջադիմությունը: Այն,  
ինչ տեսել է Վագները Թիֆլիսում, անց-  
յալ դարի 30-40 թ.թ., մի կատարյակ ա-  
նակներ էր ելլուպտացու համար: Նա պատ-

մում է, որ 10-14 տարեկան տղաները շատ  
լավ կարդում և զրում էին հայերեն, ա-  
գըրբեջաններեն, ոսուերեն, Փրանսերեն և,  
մանավանդ, դերմաններեն: Վագները «լսեց  
դերմաններեն մեր կարդալը, խոսելը, զար-  
մանը հայտնեց մեր առաջադիմության  
վրա, —պատմում է Աբովյանի աշակերտնե-  
րից Աբիմյանը, —վարժապետու աշակերտ-  
ներին դերմաններեն հարցեր էր տալիս, մենք  
նույն լեզվով ազատ պատասխանում էինք:  
Վագները հիմնում էր, երբ ևս Շիլլեր էի  
կարդում ու իմ բառերով պատմում, իսկ  
իստիսյանց Գաբրիելը՝ Գյոթեի ոտանա-  
վորներն էր կարդում ու արձակ պատ-  
մում»:

Մանավոր դպրոցի վրա պետական-չի-  
նովնիկական աչքը չէր հսկում: Մանավանդ  
որ դպրոցն Աբովյանը հիմնել էր 1837-ին,  
պետությունից թաղուն, իսկ պաշտոնական  
թույլտվություն ստացել էր միայն 1840-ին:  
Աբովյանն անում էր կամեցածը: Ա-  
շակերտների ձեռից վերցնելով Սաղմոսը,  
ավետարանը, Աբովյանը նրանց ձեռն է

եռալիս Գյոթեկի և Շիլերի գըքերը։ Իր ա-  
շակերտների համար նա փորձում է կազմել  
ուսումնական ձեռնարկներ հայերեն լեզ-  
վով։ Նախ կազմում է «Նախաշավիղը» (մի  
այբբենարան իր ընթերցարանով)։ Այնու-  
հետեւ կազմում է մի աշխարհագրական  
ձեռնարկ, որը բացվում է «Ամերիկու լիս  
քցիլը» ակնարկով։ Եվ, վերջապես, «Ռուս  
տեսական և գործնական քերականություն  
հայերեն լեզվով ըստ Տապակի»։ Վերջին  
ձեռնարկով Աբովյանը փորձում է հեշտաց-  
նել ոռուս լեզվի ուսումնասիրությունը  
հայերի մեջ։ Նա դատապարտում է ոռու-  
սերեն խոսքերը լատինական տառերով գը-  
րելու եղանակը։ Նա չի ընդունում նաև  
ոռուս լեզվի առանձին հնչյունները հայերեն  
տառերով ավանդելու ձեւը և հարուցում է  
ավելի ճիշտ և նպատակահարմար եղա-  
նակի անցնելու պահանջը։ Նույն պահան-  
ջը, Աբովյանից անկախ, առաջ էր քաշել  
նաև գերմանացի հայկաբան Պետերմանը։  
Աբովյանը, ինչպես պատմում են նրա ա-  
շակերտները, անչափ զդայուն, ջղային

մարդ էր։ Ամենաթեթև առիթից հուզվում,  
բորբոքվում էր։ Իբրև մանկավարժ շատ  
խիստ էր։ Զէր կարողանում տանել, երբ  
մեկը դասի ժամանակ անուշադիր էր մնում  
դեպի իր խոսքը։ Համբերությունից դուրս  
եկած՝ երբեմն դիմում էր ծեծի, թեև  
ոկզբունքով դեմ էր դրան։ Օրինակ, Գաբ-  
րիել Սունդուկյանը, որ նույնպես եղել է  
Աբովյանի աշակերտներից, պատմում է,  
թե ինչպես մի քանի անգամ իր եղբորը՝  
Միքայելին, դասի ժամանակ Աբովյանը  
նկատողություն է անում, որ ուշքը վրան  
պահի, եղբայրը չի լուս։ Բարկացած՝ Ա-  
բովյանն ականջից քաշում է։ «Բայց նա  
անչափ նրաբղդաց սիրտ ուներ, — պատ-  
մում է Աքիմյանը, — քիչ ժամանակից հե-  
տո սկսում էր ծեծված աշակերտին փայ-  
փայել և իրա արածի վրա արտասվելու  
չափ զգացվել»։

Բոլոր աշակերտներն էլ ասում էին, որ  
նա միայն ուսուցիչ չէր, այլ հոգատար  
հայր։

\* \* \*

1838-ին Արովյանը խնդրատու է լինում  
էջմիածնի սինողին իրեն հոգևոր կոչումից  
ազատելու մասին։ Պատճառներից մեկն էլ  
դառնում է մի մատաղահաս ղերժանուհի՝  
էմիլիա Լոռողե անունով։ Արովյանն էմիլի-  
ային հանդիպել էր Թիֆլիսի ղերժանական  
գաղութում, ուր հաճախ, վշտացած պահե-  
րին, գնում էր վերհշելու իր գործադրյան  
կյանքի տարիները։ Միրահարված քսա-  
նամյա էմիլիային՝ Արովյանն անհամբեր  
սպասում էր սինողի վճռին։ 1839-ի սկզբ-  
ներին պատասխան ստացվեց։ Արովյ-  
յանն այլևս հոգևորական չէր։ Նույն  
տարվա աշնանամտին Արովյանը և էմիլի-  
ան ամուսնացան։

\* \* \*

Արովյանին չէին հասկանում։ Նա բարձր  
էր կանգնած ժամանակից և միջավայրից։  
Մենակ էր ու անօդնական։ Էջմիածնի ու  
հոգևորականության հետ վաղուց դժու-  
մած էր։ Առետրական դասը երբեք ընդա-

նաջ չկնաց նրա լուսավորական ծրագրե-  
րին։ Բարձր պաշտոնեությանը, ինչպես  
երեսում է, այնքան էլ բարեհուսություն  
չէր ներշնչում գորպատյան համալսարա-  
նականը։ Իսկ նրա անմիջական ըրջապատը  
մի կատարյալ ճահճին էր։ Պաշտոնակիցնե-  
րի հնավանդ հայացքները, մանկավարժա-  
կան անկարողությունը, նախանձն ու չա-  
րակամությունը խանդաբում էին նրան  
փոխելու դպրոցի ներքին կյանքը, ելլու-  
պական հողի հաղորդելու նրա ուսումնա-  
կան առօրյային։ Արովյանն ամենուրեք  
հանդիպում էր անտարբերության։ Նրան  
ըրջապատում էր թշնամությունը։ Անպա-  
կաս էր որոգայթն ու դավը։ Նա աղատում  
չուներ այդ մարդուկներից։ Նրանք կըն-  
կակուն հետեւում էին Արովյանին, զրպար-  
տում, դավեր սարքում նրա դեմ։ Առաք-  
յալին ստիպում էին պատիկանալ, նմանել  
մյուս չինովնիկներին, գառնալ մի սովո-  
րական քաղքենի, հրաժարվել այն բարձր  
եղեալներից, որոնք այնքան հմայք ունեին  
նրա աչքում։

ինչպես շուտ ոգևորվող, այնպես էլ շատ  
շուտ հուսահատվող, ընկճվող էր Աբով-  
յանը: Մանը ու անմխիթար օրեր շատ ապ-  
րեց: Ակադեմիկոս Ֆրենին և Ստ. Նազար-  
յանին դրած նամակներն Աբովյանի հոգե-  
կան փոթորկումների լուռ հուշագրերն են:  
«Ես տարութերվում եմ տաշեղի վրա մի  
ալեկոծ ծովի մեջ», — ասում է նա Ֆրե-  
նին:

Աբովյանը որոշեց Թիֆլիսից հեռանալ:  
Գանգատովելով իր վիճակից, Աբովյանը մի  
նամակում Ֆրենին հարցնում է. «Կարո՞ղ  
է արդյոք Պետերուրդում մի անկյուն  
դանվել, վորտեղ ես կարողանում իմ հացը  
հայթայթել»:

Ֆրենն օգնության հասավ:

Ազգային լուսավորության նախարարու-  
թյան առաջ նա հարց բարձրացրեց Դա-  
ղանի համալսարանում հայոց լեզվի և  
դրականության ամբիոն հիմնելու մասին:  
Նրա առաջարկն ընդունվեց: Ֆրենի առա-  
ջարկով ամբիոնի պետքեսորության թեկ-  
նածու առաջ քաշվեց Աբովյանը: Վեց ամ-

սյա ժամկետ էր սահմանված գիտական շա-  
րադրություն ներկայացնելու՝ ամբիոնի  
պրոֆեսորությունը ձեռք բերելու համար:  
Այդ մասին Աբովյանն ուշացումով իմա-  
ցավ: Նա շտապեց ուղարկել իր երկու  
պատրաստ աշխատությունները: Մեկը՝  
«Ծուռ տեսական և գործնական քերակա-  
նությունը հայերեն լեզվով», մյուսը՝ այբ-  
բենարանն իր ընթերցարանով՝ հայ պատա-  
նիների համար: Վերջինս հոչակավոր «Նա-  
խաշավիղն» է: Աբովյանը բոլորովին ան-  
հույս էր, որ «նման աշխատանքները հա-  
մապատասխան լինեն» ակադեմիայի պա-  
հանջներին:

Գրախոս նշանակվեց ակադեմիկոս Բրոս-  
ուն: Վերջինս Աբովյանի մեջ տեսնում է  
այն մարդուն, որ առաքելություն է վերց-  
րել լուսավորել իր ազգը: Նոր լեզվի ժըխ-  
տումը և հնի պահպանումը, — մեջ է բերում  
Աբովյանի միտքը Բրոսսեն, — պատճառ  
է գառնում թանձրացած տղիտության, որի  
մեջ խորագույն պահպան է ժողովուրդը և նույն-  
իսկ, ինքը հոգեորականությունը: Բրոս-

սեն խոստովանում է, որ ինքն այնքան էլ համակիր չէ հայ ժողովրդական լեզվին, բայց «Երբեք մտքովս չեմ անցրել, —գրում է նա, —որ ես շուտով ստիպված ալիսի լինիմ փոխել կարծիքս... և այդ մեր հեղինակի չնորհիվ, որ ներշնչեց ինձ գրադադարը»:

Զնայած դրան, Աբովյանի հայացքների խոր գեմոկրատիզմը նրան երկընտրանքի մեջ էր դցել: Բրոսսեն դուր չեն եկել Աբովյանի կրքոտ հարձակումները եկեղեցական լուսավորության և ընդհանրապես հոգևորականության դեմ, ինչպես և նրա այն հանգուլն հայտարարությունը, թե դրաբարը մեռած լեզու է, թե նա անօգուտ է և, մինչև իսկ, վնասակար: «Երա այլպիսի պնդումները, —ասում է Բրոսսեն, —իսպառ թույլ չեն տալիս կարծելու, որ նա ի վիճակի պետք է լինի պատվով կատարելու իր պարտականությունները»:

Աբովյանը, որն անհամբեր սպասում էր պատասխանի, 1841-ի սկզբներին հետ

ստացավ իր ձեռադիրը: Դա մերժման նըւշան էր:

\*\*\*

Պաշտոնական մտայնությանը գերի մնացած մտավորականությունից հիսութափված՝ Աբովյանը փորձում է ավելի մերձենալ ժողովրդին, մտնել ։ Նրա խորքը, ճանաչել նրա հոգեբանությունը: Աշակերտները պատմում են, որ նա առանձին սերուներ դեպի ժողովրդական տոները: Դա նրա համար անհոգ զվարճանքի աղբյուր չէր: Նա ուզում էր ժողովրդի մեջ լինել, շփվել, լսել նրա զրուցը, դիտել վարք ու բարքը, իմանալ ի՞նչն է հուզում, ոգևորում այս հասարակ ու պարզ մարդկանց: Դորպատում ուսած, ելքոպականացած Աբովյանը չէր խորշում ժողովրդից, ինչպես չատ մտավորականներ, այլ, ընդհակառակը, որտեղ ջիրիդ էր լինում, մուշտակուիդ կամ դեյնորա, շտափում էր այնտեղ: Մեծ հետաքրքրություն ուներ դեեաի ու իմտագնացությունները: Մի անդամ կնոջ

և մի խումբ աշակերտների հետ նա մասնակցում է սուրբ Գեղորգի տոնախմբությանը։ Զվարճասեր ուխտավորները, գիշերով, բաց երկնքի տակ, խարույկ էին վառում, ասում, խոսում, ծիծաղում կամ կրակի չուրջը նստած՝ աշուղների նվազին ու խաղին էին ականջ դնում։ Մի խոսքով՝ ամեն կողմ գուռնա, երգ, պար; Միայն Աբովյանը, խըրախճանքը թողած, չըջում էր ուխտավորների մեջ, խոսում նրանց հետ, կամ լուռ լսում նրանց խոսքն ու զրույցը։ «Շատ անդամ, --պատմում է Աբովյանը «Վերքի» առաջաբանում, — որ դոնաղ էի գնում, յաքաղաքովն անց կենում, ուշ ու միտք հայաքում էի՝ թե տեսնիմ խալիսը խոսալիս, քեփ անելիս, ի՞նչ բանից ա ավելի հաղ անում։ Շատ անդամ տեսնում էի, որ մելքանում, փողոցում մեկ քոռ աշղի էնպես են հայիլ-մայիլ մնացել ու կանդնել ականջ դնում, փող բաշխում նրան, որ քերանների ջուրը գնում էր»։

Աբովյանն ինքն սկսում է հալաքել ժո-

ղովբդական խոսքն ու զրույցը, առակներ մշակել, զերմաններնից, Փրանսերենից ու սուսերենից թարգմանել, փոխադրել, բայց այնպես, «որ խալիս սրտով ըլի»։ Ժողովը բարդական «ջանդյուկումների» նմանությամբ նա հյուասում է իր բայաթիների չարքը։ Այս բոլորը նա հավաքում է մի գրքի մեջ «Պարապի վախտի խաղալիք» ընդհանուր վերնագրի տակ։ Աբովյանի կյանքի այս շրջանը հարուստ է հազար ու մի հղացումներով։ Բացի Փուկլորային նյութեր հավաքելուց, նա փորձում է աշխարհիկ նյութի հիման վրա ժողովրդական լեզվով մշակել պրեթե գրական բոլոր ժանրերը։ վեպ, պատմվածք, դրամա, առակ, երգիծական պոեմ, բանաստեղծություն, քառյակ, մանկական ստանավոր, թարգմանություն, ակնարկ, հոդվածեւ, վերջապես, էպիստոլյար գրականություն։ Այս շրջանում նա գրում է «Թուրքի աղչիկ», «Առաջին սերը», «Օվսանա» պատմվածքները, «Հաղարկեցն» երգիծական պոեմը։ Գրում է շատ ուրիշ գործեր էլ, բայց ամենանշանակա-

Ալցը, որ նա ստեղծեց այդ տարիներին,  
Հոչակավոր «Վերք Հայուստանի» վեհպն  
էր:

Աբովյանը դիմեր, որ իր արածը դիմա-  
գրության է հանդիպելու: Նա «Պարապ  
վախտի խաղալիք» դրքի առաջարանում  
գուշակում է իր գրքերի գլուխն գալիք փոր-  
ձանքը: «Վախենում էի, թե ժամանակս,  
փողս կորչի, զրքերս էլ մեկտեղ, թողումը  
վեր ընկած մնա, փթի»: Բայց նա հույսը-  
նի կորցնում: Բարեկամներն ու ծանոթները  
խորհուրդ են տալիս գրքերը տպել տալ:  
Պահպանողական միտքը ծառս է կանդնելու  
իր գրքերի դեմ, — այսպես էր համոզված  
նա: Գրքերից մեկին նա մի այսպիսի խրատ  
է կցում.

Գնա՛, իմ խեղճ դի՛րք՝ գնա՛ մարդամեջ.  
Գլուխող քաշ դցի՛ր, մի՛ նեղանար հեչ:  
Ականջդ փակի՛ր, սիրոտդ լեն բռնի՛ր,  
ինչ տաեն, խոսեն, տա՛ր ու համբերի՛ր:  
Ամեն մի խոսքին ականջ դնողը  
Գլուխը կկորցնի, յա ելած դուղը:

Ով թե լայաղ չանի քեզ վերցնի, կարթա,  
թո՛ղ իր շնորքը պահի, մոտ չը գա:

Աբովյանն անհույս չէր: Այս խրատի մեջ  
նա շատ պարզ ասում է, որ կդա ժամա-  
նակ, երբ մարդիկ կիմանան, կհասկանան  
իր գրքերի արժեքը, կդան ուրիշ մարդիկ,  
և իր օրինակով կդրեն, կմշակեն, «դըհա  
լավը կշինեն»: Աբովյանին հավատ էր  
ներշնչում ժողովուրդը: «Թե գիտուն, խե-  
լոք մարդիք ինձ պախարակեն, դու էլ ա  
ինձ պահի՛ր՝ սի՛րելի աղդ, չունքի իմ ու-  
ղածս էն ա, որ քեզ ծառայեմ, քե՛զ իմ  
կյանքս տամ, քանի շունչս բերնումս  
ա», —դիմում է նա ժողովրդին:

Գոտեպնդված, ուժ առած աղնիվ բարե-  
կամների խոսքից, քաջալերանքից, ժողո-  
վուրդի համար բարին ու գեղեցիկն անելու  
բարձր գիտակցությունից, Աբովյանն ան-  
քուն գիշերներ էր լուսացրել սեղանի մոտ,  
գրքերի ու թղթերի մեջ թաղված: Վողե-  
վորության այդ նվիրական պահերին նա  
թղթին էր հանձնում իր մտքերը, հույզե-

բը, այլովիսով հիմք ոնելով Հայ նոր  
դրականության:

\*\*\*

«Վերք Հայաստանի», —ահա այստեղ է  
իսկական Աբովյանը: Դա նրա կյանքի կո-  
թողն է, վաստակի վառքը: «Վերքը» եղավ  
այն երջանիկ դիրքը, որով բացվում է Հայ  
նոր գրականության տարեդրությունը:

Ի՞նչն ստիպեց Աբովյանին դրելու «Վեր-  
քը»:

Աբովյանն առաջինը դիտեց, որ Հայերենը  
մոռացվում է. Ժողովուրդը մտքերն արտա-  
հայտում է թուրքերեն, մտավորականու-  
թյունը՝ ուսւերեն: Նա մի ներքին ողբեր-  
դություն ապրեց: Դա միայն մանկալարդի,  
աշակերտին սիրող ուսուցչի հոգական ալե-  
կոծումը չէր, այլ և հանդուզն քաղաքա-  
ցու, որի հոգում դլուխ էր բարձրացրել  
վիրավորված ազգային արժանապատվու-  
թյունը: Շատ մռայլ էր պատկերանում ա-  
սլադան Աբովյանին: Լեզվի հարցը—գրա-  
բա՞ր թե աշխարհաբար, նրա համար մի

սովորական հարց չէր: Այդ հարցի անհա-  
պաղ լուծումը մի ժողովրդի ազգային ինք-  
նագիտակցության զարթոնքի հուժկու-  
պահանջն էր: Աբովյանը տեսնում էր, որ  
այլևս ոչ մեկը հայերեն դիրք չի առնում  
ձեռքը, հայերեն խոսողներն էլ շատ հաղ-  
վագեղ են: Աբովյանը նկատել էր, որ  
վառվուն պատանիները հորանջում, քնում  
են հայերեն գրքերի վրա: Ի՞նչն էր դրա  
պատճառը: Հայերեն գրքերը, մեծ մա-  
սմբ, ժամագրքեր էին և, անպայման,  
զրաբարալեզու: Եվ, ընդհակառակը, այդ  
նույն աշակերտները համիշտակված կար-  
դում էին ուսւերեն, գերմաներեն և ֆրան-  
սերեն լեզվով ձեռքերն ընկած գրքերը:  
Փոխանակ վառելու, բորբոքելու երեխայի  
երկակայությունը՝ Հայերեն գրքերն սպա-  
նում, մեղնում էին ամեն հետաքրքրու-  
թյուն և աշխույժ: Ուրեմն, պատճառը  
զրաբարն էր: Պետք էր նոր լեզու ստեղ-  
ծել, այնպիսի լեզու, որ հասկանալի լինի  
ժողովրդին և ոչ միայն առանձնանորհյալ-  
ներին:

«Մեկ աղքի պահողն էլ լեզուն առ ու  
հավատը, թե սրանց էլ կորցնենք, վայն  
էկել առ մեր օրին», —ասում է Աբովյանը  
«Վերքի» մեջ: Լուծել լեզվի հարցը, այ-  
սինքն քաղաքացիություն տալ ժողովրդա-  
կան լեզվին, որը հասկանալի էր «հարիր  
հաղարին», հարազատ ու մոտ բոլորին,  
նշանակում էր կամուրջ զցել դրականու-  
թյան և իրականության միջև, դիրքը, գրա-  
վոր խոսքը հանել վանքի խցերից, տանել  
կյանք, մտցնել ժողովրդի մեջ, դարձնել  
այն նրա սեփականությունը: Վերջապես,  
այդ նշանակում է՝ ժողովրդին աղդային  
միողջության բերելու դադախարն ապա-  
հովել:

Բայց դա հարցի միայն տեսական կողմն  
էր: Լուծումը պահանջում էր զործ: Առա-  
ջին խիզախը եղավ նա, ով այնքան կրքոտ  
ասպարեզ էր քաշել այրող հարցը: Այսին-  
քըն՝ ինքը—Աբովյանը: Բարիկենդանի տո-  
ներին, աշակերտներին արձակելով, Աբով-  
յանը վերհիշում է այն բոլորը, ինչ տեսել,  
լսել ու ապրել էր երեխա ժամանակ Քա-

նաքեռում: Աբովյանի միտքը կանգ է առա-  
նում մի խոշոր պատմական անցքի վրա,  
որին ինքը ժամանակակից ու ականատես  
էր եղել պատանի հասակում: Ահա այդ  
նյութի վրա նա որոշում է կառուցել իր  
առաջին վեպը:

«Վերքի» նյութն այն հետաքրքրական  
պատմաշրջանն է, երբ Հայաստանը դառ-  
նապին հեծեծում էր պարսկական լծի  
տակ:

Վիպաղբողը բացում է ձնշված ժողովըր-  
դի վերքը, նրա ողբերգությունը: «Ժամա-  
նակը էնպես էր ծովել, որ մարդ իր  
զվուխը չէր կարում պահի», — ասում է  
Աբովյանի զյուղացին: Հայ զյուղացին  
դժոն էր: «Վերքը» նրա տրտունջքի փի-  
լիուֆայությունն է: Գյուղացին իր դա-  
տոծի տերը չէ «Ո՛չ տունն էր իրանը, ոչ  
մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ո՛չ ողու-  
շաղը»: Գյուղացուց խլել են ամեն ինչ:  
Խլել են վո՛չ միայն ինչքը, այլև պատիվը:  
Սարդարի չնչին պաշտոնյաների կրնկի

տակ տրորվում է հայի մարդկային կու-  
չումն ու արժանապատվությունը:

Վա՛յ է՛ն ազգին՝ որ աշխարքումս  
անտեր ա,  
Վա՛յ է՛ն երկրին՝ որ թշնամու  
գերի ա,  
Վա՛յ է՛ն խալսին՝ որ ինքն իր  
կյանքն, աշխարքը  
Զի՛ պահպանիւ, ու հարամու  
ձեռ կը տա:

Բայց թշվառությունն էլ ափ ու սահման  
է ճանաչում: Վիշտ ու տառապանք, ամեն  
անարդանք տեսած ժողովութղին էլ իր հե-  
րոսականն ունի: Համբերությունը հատած  
ժողովրդի տրտունջին էլ կարող է ծնել  
հանդուզն, խիզախ մարդիկ, որ ախոյան  
կանդնած հետ ժողովրդին, կովեն, արյուն  
թափեն նրա համար: Դա ժողովրդի ազա-  
տառենչ ոգին է, որ այսօր Աղասու, վաղը  
Հովակիմի, մյուս օքը մի այլ անուն ու  
կերպարանք առած, զենքը ձեռին բարձրաց-

նում է գլուխը: Ազատասիրությունն ամեն  
մի ժողովրդի անկապտելի իրավունքն է:  
Աղասին արյուն է թափում այդ իրավուն-  
քը ձեռք բերելու համար: Նա իր գլուխը  
զնում է մահու տակ:

Այն քաղաքական մտայնությունը, որի  
վրա հեղինակը կառուցել է իր վեպը, ար-  
տափայլում է Աբովյանի էպոխայի դիմա-  
վոր կիրքը, աղքային ազատազրության  
դաշտափառը:

Ուստի զորքի հաղթությամբ Հայաստանը  
ուղարկ է զնում կյանքի մի նոր շրջան: Ուստ-  
ները վեպի մեջ հանդես են գալիս իբրև  
Հայաստանի փրկիչ:

Աբովյանի քաղաքական մտայնությունն  
այն ժամանակ, իհարկե, չէր թափանցում  
ուստականության աշխարհակալաւ-  
կան ճգուտմների մեջ: Նա իր առաջ  
չէր դնում, թե ինչու է «Ուստաստանը  
աիրում կովկասի լեռներին»: Աբովյանի  
ուստական օրիենտացիան, սակայն, իր շատ  
որոշ պատմական հեղատեսությունն ու-  
ներ:

Այո՛, նա պատմական խորաթավանցոււթյամբ էր նայում քաղաքական հարցերին: Նա շատ լավ դիտեր, որ մի լուսավորված պղի, օրինակ, Փրանսացիների համար, Ծուռաստանի տիրապետության տակ անցնելը այն նշանակությունը չէր ունենա, ինչ հայերի համար:

Հայստանը քայքայված և ուժասպառ եղած երկիր էր: Նրան պետք էր մի ուժեղ կովան: Ո՞րն էր լինելու այդ կովանը— Պարսկաստանը, թե Ծուռաստանը: Պարսկական տիրապետությունն իր ասիական ահավոր հետամնացությամբ վտանգել էր Հայստանի ոչ միայն աղղային ինքնությունը, այլև Փիզիքական գոյրությունը: Արովյանը մի տեղ ասում է, որ ամեն ինչ խորտակող, ուժեղ հեղաշրջումների հորձանքի մեջ հայերի համար դժվար է պաշտպան կանգնել իրենց աղղային ինքնուրույնությանը, պահպանել լեզուն և ընդհանրապես հոգեոր գանձերը: Ծուռաստանի մեջ նա տեսնում էր այն հզոր պետությունը, որի թևերի տակ հայ ժողովուր-

դը մի պահ կարող է ուշքի դալ, չունչքաշել, հավաքել իրեն: Ծուռաստանի կողմն անցնել՝ նշանակում է փրկել աղքը կորստից—ահա առաջին պայմանը: Իսկ երկրորդը՝ ժողովրդի բախոր կապել մի ժողովրդի հետ, որի լեզուն, զրականությունը, կուլտուրան արդեն սկսել էին աշխարհի հիացմունքի առարկան դառնալ: Այդ է պատճառը, որ Արովյանը շատ մեծ նշանակություն էր տալիս ոռուսաց լեզվին: Դա կօդնի, —ասում էր նա, — կրթելու մեր միտքն ու զգացմունքը ուսու դրականության ստեղծագործությունների վրա, վերջապես, մոտենալ այդ ժողովրդի ոգուն: Ծուռասաց լեզուն սովորելով, — ասում է նա մի ուրիշ տեղ, —մենք կարող ենք միանալ ոսւս մեծ աղքի հետ, որի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր և անձնվիրություն:

Աղքության դաղափարը վեպի քաղաքական մտայնության առանցքն է: Ժողովուրդը պետք է դա, հասնի աղղային ինքնահանաչության: Դրա համար պետք է

այսպես անել, որ ժողովուրդը կարենա  
ինքն իրեն ճանաչել... «մեր աղբը, որ  
իւղա ամսացել, թրի, կրակի եսիր, ըուրած  
պատճառն են ա, որ մեղ ասող չի ըլում,  
թե մենք ով ենք, մեր հավատն ինչ ա,  
ինչի համար ենք եկել աշխարք. քոռ գա-  
լիս ենք, քոռ զնում»: Այստեղ գյուղացու  
բերանով խոսում է ինքն Արովյանը: Դուքս  
հանել ժողովրդին հոգեկան և մտավոր  
խավարից, որի մեջ ընկդմված նա խար-  
խավում է: Ժողովուրդը պետք է կանդնի  
ազգային միոջության ճամբի վրա, դառ-  
նա ազդ, համահավաք ժողովուրդ, ունե-  
նա իր ազգային հոգեբանությունը: Դրա  
համար նա պետք է լավ իմանա իր պատ-  
մությունը, լավ ու խոր ըմբռնի, հասկա-  
նա այն գարերի ճամբան, որի վրայով  
ինքը, այդ հինավուրց ժողովուրդը սահել,  
անցել է իրը կոփերտված, զիրավոր ու  
դառնացած, ցիրուցան եղած ու անկազ-  
մակերպ ժողովուրդ: Իր «Վերք»-ով Արով-  
յանը հայի ձեռն է տալիս նրա շատ մոտ  
անցյալի պատմությունը:

Բայց «Վերք»-ի քաղաքական մտայնու-  
թյունն այս կետի վրա չի հանդչում: Աբո-  
վյանն այն մտքին է, որ այդ բոլորը վեր-  
ջին հաշվով ծառայելու են մի գաղափարի,  
որը գարեր անընդհատ կազմել է ինչպես  
ուրիշ ձնչված ժողովուրդների, այնպես էլ  
հայ ժողովրդի երազանքը: Ո՞րն է այդ.  
ունենալ ազատ և քաղաքականապես ան-  
կախ հայրենիք: Դրա համար չպետք է  
կախ հայրենիք: Դրա համար չպետք է  
ձեռքը ծոցը դրած կանգնել: Եթե հարկա-  
վոր լինի՝ պետք է կռվի դուրս դաշ, ար-  
յուն թափել: Բայց այս գաղափարը նա իր  
վեպի մեջ բացահայտ ձեռվ չի դրել, այլ  
ասել ու անցել է մի հետակոր ակնարկի  
ձեռվ, որ հասկացողը հասկանա:

Ազգային ազատազրական չարժումը մեր  
իրականության մեջ մկրտվեց լուսավորա-  
կան շարժման դաղափարական ավազա-  
նում: Արօվյանի երկերում եղած ակ-  
նարկները՝ «արյուն թափելով» անկախ,  
ազատ հայրենիք ունենալու մասին, վկա-  
յում են այն նոր ըջափուրը, որ 40-ական  
թվականներից ոտք դրեց հայ ազգային ա-

դատապրական շարժումը : Ուստական ցաւ-  
րիզի օգնությամբ կոփվ մղելով պարսից  
տերության դեմ, հայ ժողովուրդն այժմ  
պետք է եներ «ոռւսական հզոր արծվի»  
դեմ՝ պաշտպանելու իր ազդային իրա-  
վունքը :

Անժամանակ մահը խանդարեց Արովյանի  
քաղաքական մտայնության վճիտանալուն :  
Եվ շատ բան, որ Արովյանի ժամանակ դեռ  
պարզ ու ըմբռնելի չէր, հասկանալի ե-  
ղափ հետո, հայ վաթսունականների ժա-  
մանակ : Արովյանն իր ծոցում, դրեթե  
դատապրոդի կրեց հայ ժողովրդի պատու-  
թյան դրոշը, իսկ հաջորդ սերունդը Նալ-  
բանդյանի ձեռով թաղուն պահված դրոշը  
հրապարակ քաշեց :

Արովյանը «Վերքը» դրել ու պատրաստել  
էր դեռ 1840-ին : Հեղինակն իր վեպը չտե-  
սալ տպագրված : «Ո՞վ դիտի, բալքի թե  
մի աստվածաներ մարդ իր հոգու խաթեր  
տպիլ տա», — հույս է հայտնում նա մի  
տեղ : Այդպես էլ եղափ : Արովյանի մահից  
հետո, 50-ական թվականներին արտադրված

«Վերք»-ը ձեռքից-ձեռք անցավ : «Վեր-  
քի» առաջին տարածողները եղան նրա ա-  
շակերտները, որոնց մոտ, գեռ 1838-ին մի  
քանի հատվածներ կարդացել էր :

«Վերքը» ձեռքից ձեռք անցնելով ընկապ  
Դորպատ : Արովյանը մի տեսակ ճանա-  
պարհ էր բացել դեպի Դորպատ, որ  
50-ական թվականների սկզբներին հայ  
զրոյների ու գործիչների պաղապարական  
մկրտության ավագանն էր դարձել : Դո-  
դոյսյանը, Պատկանյանը և շատ ուրիշներ  
զիշելներ են լուսացրել «Վերքի» արտա-  
դրված օրինակի վրա, իրենց արցունքով  
թրջել ձեռագրի էջերը : Ներշնչված հայ  
դորպատականները հայրենասիրական եր-  
գեր ու բանաստեղծություններ էին դրում :

Վերջապես, 1858-ին, Փոնդոյանի ջան-  
քերով, Թիֆլիսում լույս տեսավ «Վերք  
Հայաստանին» : Վեպը մեծ հաջողություն  
ունեցավ : Վերձ Պոռշյանը պատմում է այն  
տպագրությունը, որ գործել է իր վրա  
Արովյանի վեպը : Այնքան է կլանվել Պոռշ-  
յանը, որ մի անդամ կարդալուց հետո,

նույն գիշերը երկրորդ անգամ է սկսել: «Վերքի» ազգեցության տակ նա սկսում է զրել իր անդրանիկ վեպը՝ «Սոս և Վարդիթերը»: Միայն Պռոշյանին չի ողերել «Վերքը»: Վեպը մեծ ազգեցություն է ունեցել նաև Ղազարոս Աղայանի վրա: Բարձր դնահատության է արժանացել «Վերքը» հյուսիսափայլականների՝ Ստ. Նազարյանի, Միք. Նալբանդյանի, արևմտահայ հրապարակախոս Ստեփան Ռոկանի և ուրիշների կողմից: Ավելի ուշ, 90-ական և 900-ական թվականներին «Վերքի» մասին շատ ջերմ ու դրական արտահայտվել են Ստեփան Շահումյանը և Հովհաննես Թումանյանը:

Ի՞նչն էր, որ այդպես հմայում էր վեպի ընթերցողներին: Ամենից առաջ, իհարկե, այն, որ դա մեր առաջին ազգային վեպն էր: Լավ է ասել Նալբանդյանը, թե «այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը»: Հայկական դյուդը պարսիկել տերության տիրապետության տակ,

ուստամբարսկական պատերազմը, ոստաց զորքերի մուտքը Երևան, —ահա այն պատմական դեղութերը, որ իրենց ճշմարիտ պատկերացումն են գտել վեպի մեջ:

Կառուցված լինելով ազգային ազգայի գրության դադարի վրա՝ վեպը ոսմանտիկական ողի ունի: Մարդուն բարձրացնող, միտքն ու հոգին ազնվացնող ոսմանտիկմն է այդ, որ համակում է ընթերցողին: Բայց դա վեպի չունչն է, ողին: Վեպի մեջ ուստիստական ոլատկերացումների կարելի է հանդիպել, մինչեւ անդամ նատուրալիստական նկարագրերի: Սանտիմենտալիզմ— նույնպես կարելի է գտնել: Բայց այդ բոլոր անհարիրը միավորվում է երկի հիմնական ոճի, ուսմանտիզմի, չիշտերյան ազնիվ, բարձր ոսմանտիզմի չուրջը: Բայց այդ չի խանդարել, որ Արովյանը հարազատ մնա իրականությանը, վեպը հրապարակերի մի ամբողջ աշխարհ՝ որին վիպագրի բանաստեղծական կորովը հավետենական չունչ է տվել: Արովյանի սեալիզմն անխառն չէ, բայց առողջ է, թէև,

հիմկերբովիկ է, բայց կենդանի, ինչպես  
ժողովրդի զբույցը, խոսքը: Աբովյանը,  
օրինակ, այնպես է պատկերազրում ծխա-  
մած խրճիթը, որ ընթերցողին մի պահ  
թվում է, թե ինքը ծխի հոտ է առնում:  
Զմուն տեսարանը կարդալիս մարդ ակա-  
մա ցուրտ և սարսուռ է զգում: Դեմքերը  
զծելիս էլ Աբովյանը շատ հաճախ ուելիս-  
տական հնարների է դիմում: Տեր-Մարկո-  
սը, զգիր Կոտանը, Մուսոն, տանուտե-  
լը, — այս բոլորը կենդանի մարդիկ են:

Մի փոքր այլ է Աղասին:

Դա հերոսական դեմք է և, բնականա-  
բար, նրա նկարագիրը ուելիստական չէ  
սովորական հասկացողությամբ: Աղասին  
քաջ է, առասպելական ուժի տեր, բայց  
դարձանալի ազնիվ ու բարի: Գեղեցիկ է,  
խելոք, ամեն բանի մեջ չնորհալի և ըն-  
դունակ, մարդասեր: Մի խոսքով Աբո-  
վյանն իր հերոսին ներկայացրել է բոլոր  
բարեմասնություններով: Աղասին գյուցաղ-  
նական կերպար է: Նա մի կողմով հանդի-  
սանում է ժողովրդի աղնիվ ու լավ դժերի

լիտացումը, մյուս կողմով՝ չիլերյան հեռ-  
ըսների օրինակով՝ Աբովյանի գաղափարը  
ների ձայնափողը: Այդ՝ Աղասու պատկերի  
կուռ ամբողջությունը երկիրեղկել է: Գեղջ-  
կական պարզամտությունը չի խանդարում,  
որ նա լյուտերականության դիրքերից քննի  
եկեղեցին, ծաղրի նրա ծխակատարու-  
թյունները: Իր մենախոսությունների մեջ  
Աղասին պանթեիզմի հողի վրա մերժում  
է միջնադարյան ասկետիզմը, հանդերձյալ  
աշխարհին հակառելով յերկրացին կյանքի  
հրապույրը, վայելը: Նույն մտքերն Աբո-  
վյանն արտահայտել է նաև «Թուրքի աղ-  
ջիկ» սրտառուչ պատմվածքի մեջ, այս  
անգամ արդեն իր անունից:

«Վերքը» հիմնապես կառուցված լինելով  
ուստի պարսկական պատերազմի Փոնի վրա,  
ունի շատ որոշ ոյուժետային գիծ: Մի ու-  
րիշ հեղինակ հարազատ կմնար դրան,  
բայց Աբովյանը փշորմ է վեպի այլ սահ-  
մանները և իր հախուռն ընթացքի մեջ է  
առնում ճամբին պատահածը: Վեպը հե-  
տեղված է խոհական և լիրիքական գեղում-

ներով; Վեպի հիմնական շաղախը հույզն  
է, հուղականությունը; Լինում են բազմա-  
թիվ պահեր, երբ հեղինակի զգացմունքնե-  
րի հեղեղի մեջ կորչում է սյուժեն, վիպա-  
կան գործողությունը; Ինքն Աբովյանն էլ  
է գիտակցում այդ: «Լավ չի սկսած բանը  
թողար ու էսպես քարոզ ասել, ես էլ գի-  
տեմ, ամա սիրտս չի դիմանում, ի՞նչ  
անեմ», — խոստովանում է հեղինակը վե-  
պի կեսին: Աբովյանն ասել է, ինչ որ մըս-  
քով անցել է, ինչ որ սիրտը զգացել է:Մի  
դուցե դրանից երկի միտպական կառուց-  
վածքը մի փոքր տուժել է, բայց դրա փո-  
խարեն նա «Վերքի» մեջ դրել է իր ժամա-  
նակի միտքն ու հոգին: «Վերքը» հայ ժո-  
ղովուրդն է, որ Աբովյանի բերանով դա-  
րերին ու սերունդներին խոսում է, պատ-  
մում իր տրտունքը, մտածումներն ու ի-  
մաստությունը:

\* \* \*

Մյուս մեծ և նշանավոր գործը, որ  
առեղծել է Աբովյանը, դա «Նախաշավիղն»  
է: «Վերք Հայաստանին» դարավուխ  
կազմեց հայ դրականության մեջ, իսկ  
«Նախաշավիղը» մի կատարյալ հեղաշրջում  
առաջ բերեց հայ մանկավարժական մտքի  
պատմության մեջ: Երկու դորձերի գաղա-  
փարական շաղախը դեմոկրատիզմն է: Թե՛  
մեկը, թե՛ մյուսն ախոյան կանոնցին  
կղերական միջնադարյան մտայնության  
գեմ, առաջ քաշելով աշխարհիկ ոկրունքը  
ների պաշտպանությունը գրականության և  
մանկավարժության մեջ: «Նախաշավիղը»  
հիմն ի վեր չարժեց մանկավարժական  
գործատիկ միտքը: Բացի նրանից, որ «Նա-  
խաշավիղը» փոխարինելու էր սաղմոսին,  
կտակարանին, որոնք անդիր անելու համար  
հայ մանուկները դպրուի էին ջարդում, մի-  
աժամանակ դա ելքոպական մանկավար-  
ժության դաղավարների պաշտպանու-  
թյունն էր հայ իրականության մեջ:

«Նախաշավիղի» մեջ Աբովյանը հանդես  
է գալիս իբրև Ռուսսոյի աշակերտ։ Նա  
պահանջում է ճանաչել մանկան հոգին,  
նրա միտքը չժանրաբեռնել ժամադրքի  
խրթին գրվածքներով, որոնք, ինչպես Ա-  
բովյանն է ասում, «միանդամայն օտար և  
անսովոր են դեռահաս մանուկների սովո-  
րական լեզվին, հոգեկան կարողության և  
բնական հետաքրքրության»։ Աբովյանը  
«Նախաշավով» պահանջում է մի անդամ  
ընդմիշտ հրաժարվել գրերի անունները  
տալու՝ այս, բեն, գիտ գասավանդման-  
միջնադարյան եղանակից։ Դրա փոխարեն  
նա առաջ է քաջում հնչական մեթոդը, ա,  
բ, դ, այսինքն՝ տառերի բնական արտասա-  
հնությունը։ Եվ, որ գլխավորն է «Վերքից»  
հետո «Նախաշավիղը» գրաբարի սրտի մեջ  
խրված ամենամեծ սուրբ եղավ։ «Գրաբա-  
րի խրթնաբանությունը, — ասում է Աբո-  
վյանը, — պատճառ է, որ երեխաներին ու-  
սումը սոսկալի պատիժ թվա, դպրոցը՝  
տանջարան»։ Գրաբարը «Նախաշավիղի» մեջ  
Աբովյանը փոխարինում է ոչ թե արարատ-

յան բարբառով, ինչպես «Վերքի»  
մեջ, այլ գրեթե մաքուր գրական լեզվով;  
«Վերքի» համեմատությամբ սա արդեն մի  
քայլ առաջ է։

Մի փոքր այլ եղավ այս երկու գրքե-  
րի՝ «Վերքի» և «Նախաշավիղի» հակատա-  
գիրը։ «Վերքը» գրվեց ու մնաց տպագրու-  
թյան կարոտ։ Հեղինակի աչքը բախտ  
չունեցավ տեսնելու նրա հրատարակու-  
թյունը։ Այնինչ երկար փորձություններից  
հետո Աբովյանին հաջողվեց «Նախաշավի-  
ղը» տպագրել։ Բայց այն, ինչ եկավ այդ  
գրատարակության դիմին, թերևս ամենա-  
գաժանն է հեղինակի ապրած ձախորդու-  
թյունների մեջ։

«Նախաշավիղը», ինչպես արդեն գի-  
տենք, Աբովյանը գրել էր մասնավոր դըպ-  
րոցի աշակերտների համար։ 1839-ին «Նա-  
խաշավիղը» պետք է լույս տեսներ պետա-  
կան ծախսով։ Բայց հանկարծ, Աբովյանի  
բախտից, Անդրկովկասի դպրոցների վե-  
րատեսուչ չեսսեն Միլլերը, որ կարգադրել  
էր գիրքը տպագրել, պաշտոնանկ եղավ։

Այդ չեր կարող չանդրադառնալ զրքի  
բախտի վրա: Աբովյանը կորցրեց ոչ մի-  
այն իր լավագույն բարեկամներից մեկին,  
այլև «Նախաշավիղի» հրատարակության ի-  
րավունքը, մի բան, որ նրա համար  
ստեղծել էր ցարական դահի նկատմամբ  
հանցավոր ճանաչված Հեսսեն Միլերը:  
Նույն տարին Աբովյանը «Նախաշավիղը»  
ուղարկում է Գիտությունների Ակադեմիա:  
Այստեղ ևս անհաջողության է հանդիպում  
դերքը: Աբովյանը դիմում է, որ դոնե  
տպագրվի իր գործը, բայց աղջային լու-  
սավորության նախարարությունը, դան-  
դատվելով իր նյութական հնարավորու-  
թյունների սղությունից, հրաժարվում է:  
1841-ին Աբովյանը «Նախաշավիղը» ներկա-  
յացնում է Անդրկովկասի գղրոցների վար-  
չությանը՝ հայոց գլուխցներում այն իրեն  
կեղվի ուսուցման ձեռնարկ ընդունելու հա-  
մար: «Նախաշավիղի» բախտը դտնվում էր  
Թիֆլիսի գիմնազիոնի մանկավարժական  
խորհրդի ձեռքին: Այս անդամ էլ անհա-  
ջողություն: Ձեռնարկը չի ճանաչվում բա-

կարար և օդտակար: Մի չաբք դիտողու-  
թյունների հետ ձեռագիրը վերադարձնում  
են հեղինակին: Երկու տաքի անց, թերու-  
թյունները շտկած, Աբովյանը կրկին «Նա-  
խաշավիղը» ներկայացնում է քննության:  
1843-ի վերջերին Թիֆլիսի գիմնազիոնի  
մանկավարժական խորհրդությունը քննու-  
թյան է առնում «Նախաշավիղը»: Խոր-  
հություն այս անդամ ձեռնարկը դտնում է  
սկսանի և օդտակար, սակայն պահպանո-  
ղականությանը կառչած մարդիկ առաջար-  
կում էին փոխել գրքի ողին: Երկրորդ  
քննությունից հետո՝ Աբովյանն այլևս չու-  
նելով իր գլուխին կարգված դատավորների  
քմահած վճիռները, պատահածը համարե-  
լով կյանքի մի դառն հեղնություն, փոր-  
ձում է իր ծախքով գլուխ բերել «Նախա-  
շավիղի» հրատարակությունը:

Գիրքն սկսում է տպագրվել, բայց լույս  
աշխարհ չեկած՝ ասիական վայրագ հե-  
տամնացության դուռ է դառնում: Վրաս-  
տանի թեմի առաջնորդ կարապետ եալիս-  
կոպոսը, լուելով, որ «Նախաշավիղը» դըր-

ված է ուսմկական, զոհէիկ ժողովրդական լեզվով, որը, ինչպես Թիֆլիսի մանկավարժներն էին ասում, քերականական որևէ որոշ կանոն չունի, կարգադրում է տպագրությունը դադարեցնել, հավաքել թերթերը և արգելել դրքի հրատարակությունը: Հոգևորականությունը, պահպանողական մանկավարժությունը, չինովնիկական պաշտոնեությունը, մի խոսքով այն ժամանակվա պաշտոնական-քարացած միտքը արգելքի տակ դրին մի դիրք, որ շատ տարիներ հետո հեղինակի փառքերից մեկը կազմեց:

\*\*\*

1843-ին Աբովյանը տեղափոխվեց Երևան: Դպրոցների վարչությունն այնքան էլ հաջտաչքով չէր նայում նրան: Երևան տեղափոխվելն էլ շատ որոշ փոքր էր նրան հեռու պահելու այն մտավորական շրջաններից, որոնց հետ նա շփման էր Թիֆլիսում: Այսո՛, այլևս Աբովյանը վստահություն չէր ներշնչում: Բարձրագույն իշխա-

նությունն անկարող էր չնկատելու տակ, որ նա, եղած կարգ ու կանոնից դժուհ, ինչպես կյանքում, այնպես էլ նամակներում, դանգատվում է մինիստրության վրա: Մի նամակում Ֆրենին նա կասկած է հայտնում, որ իր դրածները հայտնի են դարձել ամբողջ Թիֆլիսում: Թիֆլիսում շատ լավ հայտնի էր Աբովյանի բարեկամությունը Հեսսեն Միլլերի հետ: Վերջապես, վորխարքային ներկայացված բնութագրի մեջ Աբովյանի մասին ասված էր, որ նա «անկարող է իրեն հանձնված դպրոցը բարձրացնել մինչև այն աստիճան», որ նա օրինակելի լինի Անդրկովկասյան երկրում»: Մի խոսքով՝ Երևան տեղափոխվելն աքսորի նման մի բան էր: Բայց Աբովյանին միսիթարում էր այն միտքը, որ այժմ նա վայր է դնելու պանդուխտի ճամբորդական ցուսլը և գործելու է իր հայրենիքում:

Երևանը, հարկավ, այն չէր, ինչ Թիֆլիսը: Դա մի խեղճ, փոքրիկ քաղաք էր, գավառական սովորական ճահիճ: Աբովյան

լանն ընկել էր մի դորշ և անդույն այլ  
խարհ։ Երեանի բարձր խալը, այսինքն՝  
չինովնիկական պաշտոնեռթյունը—դատա-  
վորները, ոստիկանական պաշտոնյաները,  
մտավորականությունը—ուսուցիչները, բը-  
ժիշկները գոհ իրենց անձնական կյանքից,  
հեռու հասարակական բարձր շահագրդու-  
թյուններից, իրենց համար մի տաքուկ  
միջավայր էին ստեղծել։ Թղթախաղը սի-  
րելի զբաղմունք էր, հարբեցողությունը—  
սովորական երեւոյթ, իսկ բամբասանքն ու  
բանսարկությունը՝ միակ բաները, որ կեն-  
դանության էին կոչում մեռած աշխարհը։

Այս չրջապատի հետ Աբովյանը հաշտվել  
չէր կարող։ Նա օտար, խորթ մարդ էր։  
Ծանոթանալով Երեանի դպրոցին՝ Աբովյանի  
առաջին հոդասը եղավ, ուսումնական  
հաստատությունն աղատել անպատճառա,  
կրթական գործին միայն վնաս բերող ու-  
սուցիչներից։ Եվ դա, Աբովյանի համար  
միանդամայն աննկատելի ձեռվ, դժու-  
թյան անդրանիկ հատիկը եղավ, որ ընկավ  
ուսուցչական հին կաղմի և նոր կարդված

տեսչի միջն։ Աբովյանը երազում էր իր  
ձեռքի տակ ունենալ այնպիսի ուսուցիչ-  
ներ, որ գեթ մանկավարժական տարրական  
պատրաստություն ունենային, և, բայց  
այդ, սրտանց դուժեին։ Նա դպրոցական  
վարչության ուղղած իր զեկուցագրերի մեջ  
աշխատում էր համոզել, որ անփորձ, ան-  
պատրաստ ուսուցիչն աշակերտին հարկա-  
դրում է ամեն բան սովորել անդիր, մեքե-  
նայորեն, որ նա չի ազդում աշակերտի  
մտքի վրա… Բայց ո՞վ էր Աբովյանին  
լսողը, ո՞վ էր նրա ասածներին ուշադրու-  
թյուն դարձնողը։ Նրան չհաջաղվեց ուսու-  
ցիչներից որևէ մեկին փոխարինել մի ու-  
րիշ և նոր մարդով։ Բոլոր ուսուցիչներն  
էլ մնացին իրենց պաշտոնում։ Եվ Աբով-  
յանը, ուղերջուղեր, պետք է ուղուխը կախ  
շաբունակեր նրանց հետ աշխատել։ Այդ-  
ուես էր բարձրադույն իշխանության կամ-  
քը։ Աբովյանը շատ լավ նկատում էր, որ  
այդ բոլորն իր պաշտոնակիցների մեջ ա-  
ռաջ է բերում «միայն գժգոհություններ» և  
խոռվածություններ»։ Նա այժմ պետք է լուս

Դիմադրելը այն ցած բանսարկություններին, որ գժգոհ ուսուցիչները կազմակերպում էին իր գեմ:

Նա լեզու չփուավ նաև տեղական իշխանության հետ: Բավատցկին, որ Երևանի նահանգապատետն էր, մինչեւ վերջը գժտված մնաց նրա հետ: Արքիք քշվելու երկյուղը, աքսորական դատնալու սարսափելի հեռապատկերը հարկադրում էր նրան, ինչպես ինքն է ասում, լուսությամբ չափավորել զգացմունքը: Բայց այդ նրան հեշտ չէր հաջողվում: Հոգով և մտքով աղնիվ, բնությամբ տաքարյուն և անմիջական Աբովյանը շատ հաճախ կորցնում էր զգուշությունը, չափավոր լինելու տակտը, երբեմն, նույնիսկ, հոգեկան հավասարակրշությունը:

Այստեղ չէր հաջողվում նրան անտարբեր ձևանալ, ինուլ ու համը մնալ շըրջապատի նկատմամբ: Եվ նրա հոգին մի աղնիվ ցասումով ելնում էր, ընդվզում շուրջը եղած տղիտության դեմ: Քաղաքի դիմատներից նա զորով դպրոց էր քարշ

տալիս աշակերտներին, վողոցում երևան-շիներին բարձրաձայն հանդիմանում էր, որ իրենց երեխաներին դպրոց չեն ուղարկում: Իսկ մի անդամ ստիպված եղավ եռույնիսկ վայր բարձրացնել աշակերտներից մեկի տղետ ծնողի վրա, որը խոնարհ բարեւ էր տվել փողոցով անցնող ոստիկարնին և միանդամայն անտարբեր մնացել իր նկատմամբ: Դա մի նյարդային, ջղաձղական քայլ էր, որով Աբովյանի աղնիվ ու անմիջական հոգին մատնում էր իր անհաջությունը, գժտությունն այդ տղետ, սահմանափակ շրջապատի հետ, որի մեջ իր աննշան, չնչին ստիճանավոր, բայց վոստիկան շատ ալելի էր պատկառանք աղղում, քան, ասենք, մի Աբովյան, որ ուսուցիչ էր, մատաղ սերնդի դաստիարակ:

Աբովյանը փորձեց միխթարություն դըտնել դպրոցական գործի մեջ: Մանուկների աշխարհը նրա տարերքն էր: Նա իր ողջ եռանդը գործ դրեց իր խնամքին հանձննված ուսումնարանն օրինակելի դարձնելու համար: Եվրոպական մանկավարժության

առաջակոր սկզբունքների վրա դաստիարակված Արովյանի միտքը ճախրում էր բարձունքներում, զծում կրթական դործի այնպիսի բարենորոգչական ծրագրեր, որոնց նախանձել կարող էին հայ մանկավարժները նաև հետո, նույնիսկ մի քանի տասնամյակ անց ։ Այն ժամանակ, երբ շարունակում էր իշխանությունը միջնադարյան տիպի զըստոցը, որն իր կրթական սխոլաստիկ եղանակներով, կրոնական դոգմաներով սովորում էր մանկան մեջ ինքնուրույնությունը, սերը գեղի զիրքը, կյանքի և բնության ճանաչողությունը, Արովյանն առաջնը եղավ, որ առաջ քաշեց Հայաստանի դպրոցները հիմն ի վեր միունքու հանդուդն ծրագիրը։ Մի խոսքով՝ նրա դպրոցական դրդունեությունը Երևանում և այդ գործունեության հետ կապված ծրագրերը, մտորումները հայ մանկավարժության պատմության լուսավոր էջերից են։ Արովյանի մասին՝ իրեւ մանկավարժի, ինչպես և կրթական գործի շուրջը նրա համոզումների ու ծրագրերի մասին հետաքրքիր վը-

կայություններ են թողել եվրոպացի գիտնական-ճանապարհորդները։ Գիտնական կայսրը, որ Երևանում այցելել էր Արովյանի դպրոցը, հետեւյալն է գրում . . . «Հետարարավոր է, որ այս կամ այն հարցում նա չեղվում է ժողովրդական կրթության բընագավառում պետության նախագծած ուղուց, քանի որ արտաքին ձևականությունները չեն գոհացնում նրա՝ գեղի վեր սավաննող հոգին, հնարավոր է նաև, որ նա ևս գործել է զանազան սայթաքումներ, բայց, անկասկած, մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որը նման սիրով ու այնպիսի գոհաբերությամբ նվիրված լինի մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Արօվյանն է . . . Սակայն, գերախոսաբար, Արովյանին չեն թույլ տալիս արժանի վերաբերմունք։ Զինովինիների նեղսրությունը հաճախ ու շատ է խանդարում նրան առաջ տանելու իր ազնիվ ու բուռն ձգտումները . . . Եթե Արովյանը որպես Երևանի դափնային դպրոցի տեսուչ մնալ կարողանա իր գոր-

ծումեռության ներկա չըջանի մեջ, և թե  
նրան գործոն աջակցություն ցույց տան  
իրեն ենթակա պաշտոնյաները, այլև պա-  
հանջված չափով դնահատեն նրան, սպա-  
սելի է, որ Երևանից մի նոր լույս ծաղի  
դժբախտ ու մոռացված, դարերով ոտնա-  
հարված հայ ժողովրդի համար»:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ էր առաջարկում  
Աբովյանը կթական դործը վերակառուցե-  
լու համար.

ա) աշակերտի ձեռը տալ դասագրքեր.  
պարզ ժողովրդական աշխարհաբար լեզով  
և այնպիսի նյութերով, որոնք կարող չի-  
նեն մանկան մեջ արթնացնել բարի և աղ-  
նիվ զդացումներ, բարձր հայրենասիրական  
մտքեր.

բ) դասատվությունը մեքենաւական չո-  
պետք է լինի, այլ դիտակցական։ Աշ-  
կերտը պետք է ո՛չ թե սերտի, այլ հաս-  
կանա, ըմբռնի.

գ) մեծ տեղ տալ բնադիտական դործիք-  
ներին, դլոբուսին, քարտեզներին, նկա-

րին, որպեսզի մանուկն ուսածը գննի, դի-  
տի, շոշապիի.

դ) ուսումնական կյանքի անբաժան մա-  
սը պետք է կազմեն աշակերտական զբո-  
սանքները, լողը, խաղերը.

ե) դպրոցում ունենալ մի առանձին ու-  
սուցիչ երկրագործություն և պարտիզա-  
նություն դործնականապես անցնելու հա-  
մար։

զ) տեղական լեզուների (հայերեն, աղըր-  
քեջաներեն) դործնական նշանակությունից  
ելնելով՝ նրանց հատկացնել այնքան ժա-  
մեր, որքան ուսւաց լեզվի համար.

է) ոստիկանության միջոցով պարտակա-  
նություն դնել հայրերի վրա իրենց երեխա-  
ներին դպրոց տալու 7-8 տարեկան հասա-  
կից և չհանել նրանց դպրոցից ոչ մի պատ-  
ճառով, մինչև 14 տարեկան հասակը և,  
ի հարկե,

ը) ամեն տարի դպրոցի աշակերտներից  
մի քանիսին ուղարկել առևտորական, տեխ-  
նիկական կամ գյուղատնտեսական դպրոց-  
ները, որպեսզի զրանով ապահովվի աշա-

կերտների ապագան և, դրանով իսկ, ժամանակին ամբազնդվի երկրի արդյունաշրերությունը. իսկ լավագույն աշակերտներին, անխափիր բոլոր դասակարգերից, ուղարկել բարձրագույն դպրոցներ:

Թվարկած կետերը, իհարկե, չեն սպառում Աբովյանի մանկավարժական բարենորոգչական ծրագիրը: Նա իր մանկավարժական հայացքները լրությամբ արծարծել է «Պատմություն Տիգրանի» անավարտ վեպի մեջ, որը Ռուսացի «Էմիլի» երկրորյակն է: Ինչպես այդ երկի, այնպես էլ ընդհանրապես նրա մանկավարժական հայացքների վրա իշխում են Ռուսացի և Պետականցի համոզումները:

\*\*\*

Աբովյանն իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց կատարելապես գժուված իր շքապատի հետ: Մի անպատմելի խոռվություն համակել էր նրա քնքույշ հոգին: 1845-ին, Ներսիս Աշտարակեցուն ուղղված հոչակավոր թղթի մեջ Աբովյանը դանդասում է, որ իր օրերն ապարդյուն են անցնում, կարողությունն օրեցօր սպառվում է, միտքը զլանում, տենչանքները հանդչում: Աբովյանը չի թագցնում, որ ամուսնական կյանք մտնելով՝ շատ վաղուց հրաժարվել էր նրանից, որ ինքը մի խորթ, օտար մարդ է սեփական ընտանիքում:

Իսկ ի՞նչ ողբերդություն էր ապրում Աբովյանը: Ի՞նչ անրուժելի վերք ուներ նրա սիրտը: Դա հայրենիքի վեշտն էր, Հայաստանի վերքը, որն ամոքելու համար պատրաստ էր, ինչպես ինքն է ասում, նույնիսկ իսաչ բարձրանալու:

Աբովյանի հոգին լուռ մաշվում էր փոթորկումների մեջ: Այլևս ոռւս պետականությունը չէր ներշնչում այն հույսն ու հավատը, որ ուներ նա տարիներ առաջ, երբ գրիչը ձեռին, գլուխը թաղած թղթերի մեջ՝ հափշտակված գրում էր իր «Վերք Հայաստանին»: Այլևս Աբովյանը չէր տեսնում հայերի համար քաղաքական աղատու անկախ կյանքի իրական ուղի: Ամելին, նա պետք է նկատեր, որ սուսական դահը

նոր շղթաներ դրեց հայ ժողովրդի ոտքերին: Եվ այս անգամ Արովյանի խոյանքի սովոր հոգին ընկղմվեց խոր հուսախարության մեջ, մի մեծ վիճ բանալով իր և իրականության միջև: Կյանքի ամեն մի քայլն այժմ նրա առաջ խոր հիասթափության մի նոր դուռ էր բացում: Արովյանը եվրոպացի գիտնականների ու ճանապարհորդների հետ (Բողենշտետ, Վագներ, Հակոտհառովեն, Արիխ և ուրիշներ) շրջել էր երկիրը, վկա դարձել ժողովրդի աղքատության, նրանց մտավոր անասելի խեղձության, ընդհանուր տղիտության, ուսու պաշտոնյանների չարաշահումների: Նա չէր կարող չնկատել, որ ոսու կառավարությունը, ինչպես Բողենշտետն էր ասում, «Հետամուտ է միայն մի նպատակի՝ կամագուրկի սարուկներ դարձնել իր հպատակներին»: Նա մի՞թե չէր տեսնում, որ Երևանի նահանգապետը կաշառակեր, պաշտօններ առնող ու ծախող մի մարդ է, որի անունն անգամ բավական էր ժողովրդին սարսափի մեջ դցելու համար: Նա չէ՞ր

տեսնում, որ յարձրագույն իշխանությունը թշնամաբար է տրամադրված դեպի իր անձնավորությունը: Մի՞թե նա այնքան պարզամիտ էր, որ չհասկանար, թե ինչու իրեն Երևան տեղափոխեցին, թե ինչու իր ձեռնարկումները (առևտրական տեսակետից կարեռ սերմեր ստանալ, զանազան դյուզատնտեսական մեքենաներ գնել, գերմանիայից բնադիտական գործիքներ ստանալ, ուսուցչական կազմը թարմացնել և այլն) արգելվում, խափանվում էին: Զէ՞ որ հենց ինքը, Արովյանը, իր մի գրության մեջ բաց է անում Բլավատցկու թշնամության բոլոր խաղաթղթերը: Զէ՞ որ Թիֆլիս, Պալրոցական վարչությանն ուղղած մի զեկուցադրի մեջ, նա դառնացած ասում է, որ կառավարությունն իր անդորձնական հրահանդներով խանդարում է դպրոցական գործի զարգացմանը, իսկ տեղական իշխանությունները չեն նպաստում դպրոցական գործին: Մի՞թե Արովյանը կարող էր մոռանալ, որ Ներսես կաթողիկոսի պատճառով, իրեն երեքօրյա կալանքի

տակ առան, կամ նա կարող էր չկիշել, որ կաթողիկոսը հետ կանգնեց իր աշակերտներին Գերմանիա ուսումն ուղարկելու խոստումից:

Այստ, իմաստ հուսահատական էր նրա վիճակը: Հայրենակիցները նրան չէին հասկանում: Էջմիածինը երես էր դարձրել: Պաշտոնակիցները դավեր էին սարքում նրա դեմ: Իշխանության աչքում Աբովյանը մի ժութ և կասկածելի դորպատական էր:

Աբովյանն ուզում էր հեռանալ Երևանից, դնալ մի ուրիշ տեղ, Ռուսաստան, Գերմանիա, որ հանդիսատ առնի հետապնդումներից: Բայց խիզճը թույլ չեր տալիս: Նա ուսում, կրթություն էր ստացել, երդվել՝ ապրել ու մեռնել հայրենիքի համար: Թողնել, հեռանալ՝ նշանակում էր լքել ժողովը: Հայրենիքը դիմել, զինքերը ցած դնել, կուրծքը դեմ տալ թշնամու որին: Աբովյանի ժաքից երբեք չէին հեռանում իր սիրելի ընկերոջ՝ Ստ. Նաղարյանի հորդորները մնալ և դիմադրել: Աղան, — ասում էր

նա, — կը ան երախտագետ հետնորդները և զարմացած հայացքով կնայեն իր վրա, որպես հայրենիքի մաքուր սիրո գովելի օրինակի:

Բայց որքան էլ համառ լիներ Աբովյանը, որքան էլ արիություն ունենար նրա հոգին, միկնույն է, նա զգում էր, որ ինքը միայնակ է և անօդ: Նա ապրում էր միայնակ մարդու խոր և սարսափելի ողբերդությունը:

Աբովյանի եռանդն ու նվիրվածությունը շատերի համար կասկածի աղբյուր էր: Եվ այդ չէր խուսափել նրա աչքեց: Իր մի նամակում նա խոստովանում է, որ Սիբիրի ահը շարունակ աչքի առաջ է: «Կարծում էի ամեն սհաթ, թե Սիբիրն է իմ վերջը», — զբում է Աբովյանը 1847-ին:

Կասկածների մեջ ընկած Աբովյանը կորցնում է իր հոգու հանդիսատը: Նա դառնում է մտածկոտ, նյարդային, տառապում է անքնությունից: Նա նույնիսկ մի պահ որոշում է թողնել աշխարհիկ կյանքը, նորից վերադառնալ էջմիածին, վանքի կա-

մարների տակ աղոթք մրմնջալ։ Տանջող  
Հակասությունների մեջ ընկած, նա փախ-  
չում է մարդկանցից, մենակության մեջ  
հանդիստ մինոռում, ընկերացած իր մըս-  
քերի ու հույզերի հեղեղին, որին, ինչպես  
ինքն է մի նամակում ասում, կարող է մի-  
այն դադաղը խեղել։ Նա հուսահատ ող-  
բում է իր փայտայած հույսերի կործա-  
նումը։

\*\*\*

1847-ին Աբովյանը Երևանը թողնելու  
հաստատ որոշում ընդունեց։ Մատադիր էր  
տեղափոխվել Թիֆլիս կամ Մոսկվա։

Աբովյանը 1848-ի սկզբներին Թիֆլիս է  
մեկնում տեսնվելու Ներսես կաթողիկոսի  
հետ և առնելու նրա համաձայնությունը  
Ներսիսյան դպրոցում պաշտոն ստանալու  
մասին։ Ներսեսը խոսք է տալիս։ Աբով-  
յանը վերադառնում է Երևան։ Փետրվարին  
մի նամակով կաթողիկոսը շտապեցնում է  
Աբովյանին։ Աբովյանն սպասում էր, որ  
ինքն ազատ արձակվի և իր տեղը մի ու-

րիշը Երևանի ուսումնարանի տեսուչ կարգ-  
վի։ Մարտի 11-ին Աբովյանը գրություն է  
ստանում, որ ինքն ազատված է և տեղը  
նշանակված է Տուրկեստանով։

Մարտի 30-ին նոր տեսուչն սկսում է  
ընդունել ուսումնարանի գործերը։ Ինչպես  
մյուս օրերը, այնպես էլ ապրիլի երկու-  
սին Տուրկեստանով գալիս է գպրոց՝ շա-  
րունակելու գործերի։ Ընդունումը, բայց  
Աբովյանը չկա։ Սպասում է, սակայն զուր-  
չետաքրքրվում է և իմանում, որ լուսա-  
դեմին զուրս է գնացել և այլևս տուն չի  
դարձել։ Նոր տեսուչը հաջորդ օրն արդեն  
անհանդացած, Աբովյանի անհայտաց-  
ման մասին հայտնում է Երևանի գտվա-  
ռապետին։ Մի պահ բոլորը ենթադրում  
են, որ Աբովյանի անհայտանալու պատ-  
ճառը կարող է ծառայության հետ կալ-  
ված որևէ հանդամանք, օրինակ, դպրո-  
ցական գումարի վատնում եղած լինել։ Մի  
զուցե և իրավունք ունեին այլպես կար-  
ծելու, որովհետեւ ապրիլի երկուսին, այ-  
սինքն, անհայտացման օրը, Աբովյանը

պետք է Տուրքեատանովին հանձներ ու առամնարանի դրամական հաշիվները։ Զըսպասելով Աբովյանի վերադարձին, ապրիլի 6-ին հատուկ հանձնաժողովը բացում է դրամարկղը և քննում հաշիվները։ Հստուգումը պարզում է, որ հաշիվները ճիշտ են, ենթադրությունը՝ սխալ։

Սկսվում են որոնումները։ Ամեն մի ան-  
հան հետք որոնողներին հույս է ներշնչում  
դժոնելու անլուր կորածին։ Իմիլիան և ու-  
րիշ շատերը Երկար ժամանակ կարծում է-  
ին, որ Աբովյանը կարող է վերադառնալ։  
Էմիլիան, ամեն անդամ ունաձայն իւս ՞  
դռան բաղխոց լսելիս, տեղից վեր էր թրու-  
չում, դառնում աղջկան—«տե՛ս Հայրդ-  
չի՞»։ Մի աղոտ հույս բովոր տանեցիներին  
հալատ էր ներշնչում, որ այս է՝ դռները  
բացվելու են և նրանց մեջ երևալու է Ա-  
բովյանը։

Օրերն անցնում էին, իսկ Աբովյանը ըստ կար:

Ժողովուրդը զանազան առաջսպելներ է հյուսում նրա անհայտացման շուրջը։ Զա-

Նազան և մեկը մյուսից տարբեր ենթագրությունների տեղիքէ տալիս պատահած դեպքը։ Ոմանք ասում են, որ Եշմանությունը «սև կարետով» տարել է Սիբիր։ Ուրիշներն էլ ասում են, որ մի երեանցի թուրք, կասկածելով, որ Արովյանը սիրային կապերի մեջէ իր կնոջ հետ, գաղանարար սպանել է և թաղել իր բակում։ Մի քանիսն էլ այն կարծիքին էին, թե սպանողը, հետքը կորցնելու համար, դիմակը գետն է նետել։ Ալզբում միայն Բողենչ տետը, հետո, արդեն տարիներ անց, նաև Ստ. Նաղարյանն այն ենթագրությունն արին, որ «Արովյանը մի խավար բոպելի մեջ մահու է տվել յուր անձը», այսինքն՝ անձնասպան է եղել։

Սրանք բոլորն էլ ենթադրություններ  
են: Մինչև հիմա էլ Աբովյանի անհայտա-  
ցումը մնում է մի չուռծված առեղջված:  
Թերեւս այդպես էլ մնա, մինչև որ մի ան-  
հակնալ վկայություն չդա ցըսելու դադա-  
նիքը, իսորհողավորությունն ու մութք:  
Բայց ինչպես էլուռծվի հարցը, թվարկած-

Հերից որ մեկն էլ հաստատվի և ձշովի,  
միւնույն է, այժմյանից մի բան պարզ է:  
Այդ այն է, որ Աբովյանն իր ժամանակի  
դոհը եղավ: Խանդի հողի վրա է սպանվել,  
թե ինքն է ձեռք բարձրացրել իր վրա,  
Սիրիր են քչել նրան, թե ինքն է փախել  
ու կորստի մատնել իրեն՝ միւնույն է,  
պարզ է, որ բոլոր դեպքերում էլ ժամա-  
նակը, խավար ժամանակն սպանեց նրան:

Նա չկարողացավ դուրս պրծնել «մշու-  
չից, կամայականության, լույսայն անզգա-  
յացման, անհետ կորստի, տառապնալից  
տանջանքների թափավորությունից»:

Այո՛, նա ընկալ անհավասար կովի մեջ,  
իր ժողովրդի առագայի համար մղած-  
հանդուզն պատերազմի պահին՝ իրու դա-  
ժան ժամանակների նահատակ:

### Ամփոփենք:

Աբովյանի կյանքի ախուր տարեզրու-  
թյունը հայ ժողովրդի դարավոր տառա-  
պամբի խոտացումն է մի հանճարեղ անհա-  
տի մեջ, որն ընկալ՝ խավար ժամանակների  
նենդ դաշույնը իր «աղնիսլ ու մեծ սրտի  
մեջ»:

Հիրավի, որքան ընդհանուր ու նման  
բան կա հայ ժողովրդի և նրա զավակի  
հակատաղրերի մեջ:

Հայ ժողովուրդը մի խորին խորհուրդ  
հոգում, վելքոտ սրտի թառանը շուրթե-  
րին, անվախճան մաքառում է ապրել՝ վը-  
կայելու սերունդների ու ժամանակների—

լուսավոր մարդկության առաջ, որ ինքն էլ  
մյուս ժողովուրդների պես խոսք ունի ա-  
սելու աշխարհին, որ «Հայի հանճարն էլ,  
ինչպես բանաստեղծն է ասում, միշտ սա-  
վառնել է վսեմ, էն սուրբ ու նուրբ ո-  
լորտներում, թեև ինքը՝ հայը միշտ լողա-  
ցել է արյան ծովի մեջ»:

Արովյանի կյանքն էլ մի մաքառում ե-  
ղափ, մաքառում խավարի ու տղիտության  
դեմ: Նա պատեց իր կուրծքը ու, սիրտը  
ջահ դարձրած, ժողովրդին առաջնորդեց  
դեպի ազատն ու գեղեցիկը, լուսավորն ու  
բարձրը: Ինքը վիրավոր և ուժասպառ,  
դժվար ճամբի կեսին ընկալ արյունա-  
քամ, բայց նրա մխացող սիրտը երկար լու-  
սավորեց նրանց ուղին, ովքեր դնացին  
նվաճելու փառքն այն ծով դանձերի, ինչ  
որ դարերով երկնել էր հայ ժողովրդի  
միտքն ու հոգին:

Մի քանի տարրուց կմոտենա մեծ լու-  
սավորչի անհայտացման հարյուրամյակը  
և մենք չգիտենք, թե վորտեղ են հանդ-  
չում նրա սսկորները: Մենք նույնիսկ չդի-

տենք, թե՛ ո՞րտեղ և ի՞նչպես Արովյանն  
ավանդեց իր վերջին շունչը, ունեցա՞վ  
արդյոքիր հողաթումբն աշխարհում: Բայց  
նա այն հազվագյուտ ոգիներից է, որոնք  
փարատելով դարերի մշուշը՝ հավերժու-  
թյանն են ձգտում:

Միայն հիմա, մեր օրերում է, որ պարզ-  
վում է Արովյանի ճշմարիտ մեծությունը:  
Իբրև անցյալ կուլտուրայի միակ և օրի-  
նական ժառանգ, ժողովուրդը Մարքս-Լե-  
նինյան լույսի տակ ոչ միայն վեր է հա-  
նում Արովյանի անդնահատելի դերը Հա-  
յաստանի պատմության համար, նրա նշա-  
նակությունը արդիականության համար,  
այլև նրա «հարիր հազարի» համար զրած եր-  
կերն այսոր դարձնում է միլիոնների սե-  
փականություն: Ուստի մեծ ժողովրդի օդ-  
նությամբ աղասազրված հայ ժողովուրդը,  
սոցիալիզմի կառուցման այս վառ օրերին,  
նոր կյանքի է ռդեկոչում նրան, որ այն  
անիրավ ու խավար դարում փորձեց իր  
սեփական արյունով սրբել ժողովրդի աշ-  
քից տառապանքի դարավոր արցունքը:

Այս, մի նոր կյանքի ենք կոչում նրան,  
որ մի վառ հիշատակ է թողել ժողովրդի  
սրտում:



10024



«Ազգային գրադարան



NL0381291

68.919